

Նատալյա Տեր-
Գրիգորյան-Դեմյանյուկ

Նախահայր Հայկի մասին
Ավանդության
աստվածաշնչական
արմատները



Բուենոս-Այրես, 2019. "Credo"
ISBN 978-987-45821-8-8

Նատալյա Տեր-Գրիգորյան-Դեմյանյուկ

Նախահայր Հայկի մասին Ավանդության աստվածաշնչական արմատները



Բուենոս-Այրես, 2019. “Credo”
ISBN 978-987-45821-8-8

Ter-Grigorian de Demianiuk, Natalia
Najahair Haiki masin Avandutian astvatsashchakan armatnere / Natalia Ter-Grigorian de Demianiuk. - 1a edición especial - Ciudad Autónoma de Buenos Aires : Credo, 2019.
Libro digital, PDF

Archivo Digital: descarga y online
ISBN 978-987-45821-8-8

1. Análisis Bíblico. 2. Mitos. I. Título.
CDD 220.07

Տեկստը խմբագրված է մարգարիտա Սմբատյանի կողմից

Նախահայր Հայկի մասին Ավանդության աստվածաշնչական արմատները

Մուտք: Բելն ու Բաբելոնը: Հայկը: Եբեքը: Ժամանակակից Բաբելոնը:
Հայկը որպես հայ ժողովուրդի հոգևոր միջուկի ձևավորիչ:

Մուտք

Հայկի մասին մեր ժողովրդական Ավանդությունը վաղուց է գրավել ինձ իր վառ արտահայտված աստվածաշնչական բնույթով: Ուսումնասիրելով Նոյի որդիների նշանակությունը ես անուղղակիորեն արդեն խոսել եմ Հայկի առումով իմ ռուսերեն լեզվով գրված «Таинство Пресвятой Троицы» հավաքագույի մեջ տեղադրված «Триптих» գործի 2- և 3-րդ մասերում, նաև անդրադարձել եմ նրան իմ «Шесть дней творения и Седьмой день» գրքի «Загадка сыновей Ноя» և «О троиственности человека» գլուխներում (գիրք 2-րդ, մաս 1-ին): Բայց կարծում եմ, որ նշված թեման ավելի մեծ ուշադրության է արժանի, ուստի այժմ վերադառնում եմ նրան առնվազն առանձին մի հոդվածով, որտեղ կփորձեմ միաձուլել այն ամենը ինչի մասին արդեն խոսել եմ իմ գրքերում:

Հայտնի է որ *Հայկի* մասին Ավանդությունը վերաբերում է *Բաբելոնյան խառնաշփոթության* ժամանակներին և, ինչպես դա ակնհայտ է, նվիրված է հայ ժողովրդի «ելքին» *Բաբելոնից* դեպի *Արարատյան լեռնաշխարհ*, որը իրականացվում է Հայկի առաջնորդությամբ: Նման «ելքերի» է նվիրված ամբողջ Աստվածաշունչը, բայց հրեա ժողովրդի «ելքերի» առաջնորդված *Եհովայի/Յահվեի* կողմից նախ Եգիպտոսից մինչև Խոստացված երկիր, հետո *Բաբելոնից* մինչև Աստծո արքայություն: Ինչպես ցույց եմ տվել իմ նախորդ աշխատանքներում, այդ ելքերը, ի դեպ, պատմականորեն չհաստատված, ոչ թե նշյալ երկրներին են վերաբերում, այլ Աստծո որդիների ազատագրմանը նյութամարմնական (Եգիպտոս) և հոգևոր (Բաբելոնյա) ստրկությունից, որի մեջ են ընկել Ադամի մեղքի շնորհիվ:

Հետևաբար, թեև Հայկի Ավանդությունը պատմական ապացույցներ չունի, այնուամենայնիվ կարելի է ասել, որ այն հիմնված է իրական իրադարձությունների վրա, միայն այդ իրադարձությունները հոգևոր պլանի իրադարձություններ են, որոնք, ի դեպ, ամենավճռականն են, քանի որ բոլոր կենդանի մարմինները ապրում են հոգու շնորհիվ, կամ այլ կերպ ասած՝ շնորհիվ մարդու հոգևոր մարմնի, որովհետև հենց որ հոգին լքում է ֆիզիկական մարմինը, վերջինը, վերադառնալով հողին, կամաց-կամաց աճյունի է վերածվում: Հոգու հավերժական կյանքը կապված է նրա մեջ Աստծո Մուրբ Ոգու ներկայությունից, մինչդեռ անմաքուր ոգու առկայությունը իր մեջ հոգու մահվան վստահ նշան է: Այսինքն, **հոգևոր իրականությունները այն առանցքն են, որը սահմանում է մարդու հոգու կյանքն ու մահը: Դրանք ամեն ինչի արմատն են և Արարչության միակ հիմնաքարը: Ավելին, նրանց նշանակությունը այնպիսին է, որ վերաբերում են միաժամանակ անցյալին, ներկային և ապագային**, այսինքն՝ նրանք ներկայացնում են մարդու բարոյական ընտրությունները, որ նա շարունակ կատարում է՝ ընդառաջելով կամ մահկանացու մարմնի կոչին, որ բխում է մարդու էգոից, կամ էլ՝ Աստծո Ոգու կոչին, որ մարդու խղճից է բխում: Այսպիսին է Հայկի գլխավորած ելքի

իրականությունը: Այսպիսին է նաև Աստվածաշնչական ելքերի իրականությունը: Նույնն է նաև նրանց հաղորդած լուրը, որ վերաբերում է հոգու ազատագրմանը մարմնի ստրկությունից:

Այնուամենայնիվ, *Հայկի* ելքը ընդունված է մեկնաբանել բառացիորեն, այսինքն՝ պատմական իմաստով: Այդպես է նրան ներկայացնում Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ, որտեղ հայ պատմահայրը առաջին անգամ հրապարակեց *Հայկի* մասին Ավանդությունը: Այդպես են նրան ներկայացնում նաև հայ պատմաբանները. ինչպես կիսաառասպելակ

,ան-կիսապատմական մի հերոս, որը ապստամբեց *Բաբելոնյան* ինքնակալ *Բելի* դեմ և հանելով իր ժողովուրդը *Բաբելոնից*՝ առաջնորդեց նրան դեպի *Արարատյան լեռնաշխարհ*: Ավելին, նրանք նույնիսկ պնդում են, որ Ավանդության իրադարձությունները տեղի են ունեցել մեր թվարկությունից առաջ 3-րդ հազարամյակում: Այսպիսով ստեղծվել են պատմաառասպելական հիբրիդներ, որոնք, չնայած նրան, որ ոչ մի կապ չունեն երկրի վրա կատարվող իրադարձությունների հետ, այնուամենայնիվ նպաստել են օտարների մեջ հայերի *բաբելոնյան* ծագման պատրանքի ստեղծմանը, և այդ այն դեպքում, որ, ծագելով *Հայկից*, հայ ժողովուրդը չի կարող *Բաբելոնից* սկիզբ առնել, որովհետև, ըստ Մովսես Խորենացու գտած տոհմաճառերի, *Հայկը* ոչ թե *Քամի*, այսինքն՝ *Բաբելոնի* հոր սերնդին է պատկանում, այլ նրա հակառակորդ *Հաբեթի* սերնդին: Հայտնի է, որ ջրհեղեղից հետո Նոյը և նրա որդիները բնակություն հաստատեցին Արարատյան լեռնաշխարհում, - չնայած, ինչպես ցույց եմ տվել իմ վերը նշված գրքում, նրանք ապրել էին այնտեղ նաև մինչև ջրհեղեղը,¹ - այնպես որ Նոյի թոռան *Հայկի* ծնունդը նույնպես կապված է այս լեռնաշխարհի հետ: Նշանակում է, որ հայ ժողովուրդը, այսինքն՝ *Հայկի* ժողովուրդը, չէր կարող ծագած լինել *Բաբելոնում*՝ որպես պատմականորեն ճանաչված մի երկրի մեջ: Ավելին, ոչ մի բան - ոչ *բաբելոնյան* ավանդությունները, ոչ նրա լեզուն, ոչ ավանդույթները, ոչ հավատքը, ոչ էլ նրա հայացքներն ու մշակույթը - չի համապատասխանում հայերի ավանդույթներին, լեզվին, ավանդություններին, հայացքներին և մշակույթին: Այսինքն՝ այդ տեսակ ենթադրությունները ոչ մի պատմական նախադրյալ չունեն: Տեսնելով այս ամենը և չկարողանալով բացատրել հայերի ծագման այդ սխալ տեսակետից առաջացած էթնո-լեզվաբանական և պատմական տարաձայնությունները օտարերկրացի պատմաբանները հայերի ծագումը նույնիսկ հայտարարում են անհստակ: Դրա պատճառը այն թերահավատությունն է, որով թե առաջինները, թե մյուսները վերաբերում են այն փաստին, որ Ավանդությունում խոսքը ոչ թե պատմական *Բաբելոնի* մասին է, այլ այն ժամանակների, երբ, ըստ Աստվածաշնչի, խառնվեց երկրի վրայի միակ լեզուն, որի հետեվանքով առաջացան բազմաթիվ ժողովուրդներ:

«Այն ժամանակ ողջ երկիրը մեկ լեզուով, մեկ բարբառով էր խօսում. - հաղորդում է մեզ Աստվածաշնչի Ծննդի գիրքը: - *Արեւելքից տեղաշարժուելու ժամանակ նրանք Սենար երկրում մի դաշտ գտան եւ բնակուեցին այնտեղ: Նրանք միմեանց դիմելով՝ ասացին. «Եկէք աղիւս շինենք ու այն թրծենք կրակով»:* Աղիւսը նրանց համար ծառայեց իբրեւ քար, իսկ կուպրը՝ իբրեւ շաղախ: Նրանք ասացին. «Եկէք մեզ համար քաղաք կառուցենք եւ աշտարակ, որի գագաթը հասնի մինչեւ երկինք: Համբաւ ձեռք բերենք ողջ աշխարհով մեկ սփռուելուց առաջ»: Տէրն իջաւ, որպէսզի տեսնի այն քաղաքն ու աշտարակը, որ կառուցում էին մարդկանց որդիները: Տէրն ասաց. **«Արանք մեկ ժողովուրդ են, ունեն մեկ լեզու** եւ սկսել են այդ գործն անել: Արդ, ոչինչ չի խանգարում նրանց, որ կառուցեն այն,

ինչ կամենում են: Արի իջնենք եւ խառնենք նրանց լեզուն այնպէս, որ ոչ մէկը չհասկանայ իր ընկերոջ ասածը»: Տէր Աստուած այնտեղից նրանց սփռեց աշխարհով մէկ, եւ նրանք դադարեցին քաղաքն ու աշտարակը կառուցելուց: Դրա համար այն կոչուեց Խառնակություն (Բաբելոն), որովհետեւ Տէր Աստուած այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները եւ այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մէկ:» (Օս 11: 1-9) ²

Եթե հետևենք այդ պատմաբանների տրամաբանությունը, ապա հարց կծագի՝ եթե միայն *Հայկն* էր, որ դուրս եկավ պատմական *Բաբելոնից*, ի՞նչ եղավ *բաբելոնյան խառնակության* ժամանակ առաջացած մյուս ազգերի հետ, որ մեկ լեզվից ու մեկ ժողովրդից էին ծագել: Նրանք նույնպէս դուրս եկան *Բաբելոնից*, թե՛ մնացին այնտեղ: Այս մասին ոչ մի ձայն չի լսվում: Կասկած չկա, որ հայերի պատմության վերաբերյալ նման տեսակետը պատմական կարճատեսության և անտրամաբանության վրա է կառուցված, մանավանդ որ ընդունված պատմության համաձայն, *Բաբելոնին* նախորդել են ավելի հնագույն, բայց արդեն *բազմալեզու* քաղաքակրթություններ, ինչպիսիք են, օրինակ, չինական քաղաքակրթությունը, Ինդոս գետի հովտի հալեպական քաղաքակրթությունները, Եգիպտականը (մ.թ.ա. 7000-3000), սումերականը և այլն: Ստացվում է, որ լեզուների բաժանումը պատմական *Բաբելոնի* հետ կապված չէ, որովհետև ավելի վաղ ժամանակներում է տեղի ունեցել, երբ *Բաբելոնը* դեռևս չկար: Բայց դա էլ անհեթեթություն է, քանի որ *Բաբելոնի* անունն իսկ, ինչպէս Սուրբ Գիրքն է ասում, նշանակում է «*խառնակություն լեզուների բաժանման պատճառով*»:

«Դրա համար այն կոչուեց Խառնակություն (Բաբելոն), - կարդում ենք Օսնդոց գրքում, - որովհետեւ Տէր Աստուած այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները եւ այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մէկ:» (Օս 11: 9)

Այսպիսով ակնհայտ է, որ *Բաբելոն* ասելով՝ ինչպէս *Հայկի* Ավանդությունը, այնպէս էլ Օնունդն ու Հովհաննեսի հայտնությունը ոչ թե մի առանձին պատմականորեն ճանաչված երկիր են ակնարկում, այլ ինչ-որ հոգևոր իրականություն, որում, ի դեպ, մենք ապրում ենք մինչև օրս: Սա բազմալեզվության իրականություն է, կամ, ավելի ճիշտ, Աստծուց հեռացած մարդու տարբեր ինքնաշխարհայացքների իրականություն: Այլ կերպ ասած՝ սա տարադեմ ստի, կամ աստվածաշնչական բազմազուխ վիշապի իրականությունն է, որ իր արմատներով տանում է դեպի **Արարչության** սկզբնական և վերջին ժամանակները: Այնպէս որ «*Բաբելոնից*» իր ժողովրդին հանելով՝ *Հայկը* փաստորեն նրան *բաբելոնյան իրականությունից* է դուրս բերում՝ ուղերձելով դեպի Աստծո իրականությունը, որի խորհրդանիշն է *Աստծո լեռ Արարատը*: Այս երկու իրականությունները ներկայացված են Ավանդության մեջ համապատասխանաբար իր երկու հերոսներով՝ *Բելով* և *Հայկով*:

Ավանդության և պատմական *Բաբելոնի* տարբերության մեջ համոզվելու համար առանձին ուսումնասիրենք այդ երկու իրականությունների ներկայացուցիչներին:

Սկսենք *Բելից* և *Բաբելոնից*, որի ֆոնին և որի դեմ են կատարվում Ավանդության մեջ նկարագրված իրադարձությունները:

Բելն ու Բաբելոնը

Նախ, տեսնենք, թե ով է, ըստ Օսնդոց, կառուցել *Բաբելոնի աշտարակը*: Դրա համար հիշենք վերը նշված մեջբերումը, որն ասում է.

«Արևելքից տեղաշարժուելու ժամանակ նրանք Մենասար երկրում մի դաշտ գտան եւ բնակուեցին այնտեղ: Նրանք միմեանց դիմելով՝ ասացին. «Եկէք աղիւս շինենք ու այն թրծենք կրակով»: Աղիւսը նրանց համար ծառայեց իբրեւ քար, իսկ կուպրը՝ իբրեւ շաղախ: Նրանք ասացին. «Եկէք մեզ համար քաղաք կառուցենք եւ աշտարակ, որի գագաթը հասնի մինչեւ երկինք:»

Այս խորհրդանիշներով լցված խոսքերը ներկայացնում են Աստվածաշնչական խոսքի մի մոդել, որ մեզ մի հստակ տեղեկություն է փոխանցում, այս դեպքում *աշտարակի* շինարարների ով լինելու և նրանց բնության մասին: Ի շնորհիվ բերված խոսքի հասկանում ենք, որ *աշտարակի* շինարարները «Արևելքից են տեղաշարժվել»:

Բայց ո՞ր «արևելքի» մասին է խոսքը: Արդյո՞ք այն արևելքի, որտեղ Եդեմի այգին էր տնկված, (Ծննդ. 2: 8), թե այն, ուր հեռացավ Կայենը, «Տիրոջ առջևից» և որտեղ «բնակուեց Նայիդ երկրում՝ Եդեմի դիմաց» (Ծն 4: 16)

Եդեմի դիմաց, այսինքն «Եդեմից դեպի արևելք», ինչն նշանակում է արևելքի դիմաց մի նոր արևելք ստեղծելու համար:³

Այս հարցի անուղղակի պատասխանը կարելի է գտնել այն հայտարարության մեջ, որ շինարարները քարերի փոխարեն օգտագործել են իրենց ստեղծաց աղյուսները իսկ շաղախի փոխարեն՝ կուպրը: Քարը Սուրբ Գրքում վերաբերվում է ոգու ամրությանը և այդ պատճառով զուգաբացվում է հավատքի հետ որպես «*հավատքի քար*»: Ուստի վերոհիշյալ հայտարարությունը նշանակում է, որ շինարարները հրաժարվել են *հավատքի քարից* և, հետևաբար, շաղախից՝ վստահելով իրենց գիտությանը – իրենց սարգած աղյուսներին ու կուպրին: Իսկ այդ փաստը ցույց է տալիս, որ խոսքը *Կայենի* որդիների մասին է, ովքեր հեռացել են Աստծո դեմքից «դեպի արևելք», այսինքն, չեն ուզում Աստծուն նայել ու լսել Նրա Խոսքը, հակադրելով վերջինին իրենց խոսքը, որ մարմնի ցանկություններից է բխում:

«Արևելքից տեղաշարժված» Կայենի որդիները այսպիսով հեղեղեցին ամբողջ արարչությունը, ինչպես մոլախոտն է հեղեղում ցորենի դաշտը և մրցակոչ անելով Աստծուն *Բաբելոնյան աշտարակի* մինչև երկինքը կառուցմամբ՝ սկսեցին ստեղծել իրենց էզոցենտրիկ աշխարհը, հափշտակելով ամեն մի կենդանի շունչ, այսինքն ամեն մի կենդանի շնչին մահ պատճառելով: Քաղաքը, որ կառուցեցին, *Բաբելոն* կոչվեց: Հենց առաջին հայացքից այդ անվան վրա տեսնում ենք, որ այն բաղկացած է *Բաբ* և *ել* արմատներից, ինչպես նաև «ոն» վերջավորությունից, որը նշանակում է «տեղ» կամ «քաղաք»: Առաջին – *Բաբ* – արմատը ամբոխի առաջնորդի անունն է, որ հերքեց Աստծո միակ լեզուն փոխարինելով նրան բազմալեզույամբ, իսկ երկրորդ «*ել*» արմատը նշանակում է աստված և ցույց է տալիս, որ *Բաբ* անուն կրողը իրեն Աստծու տեղ է դրել: Այնպես որ *Բաբելոնը* կարող ենք բացատրել ինչպես «*Բաբ աստծո քաղաք*», որտեղից էլ նրա ակադակյան *Բաբել* և աստվածաշնչական *Էլ-Բաբ* հնչելն է ծագում:

Հայտնի է, որ *Բաբելոնում Բաբը* երկրպագվել է որպես «*աստվածների հայր*»,⁴ իսկ Եքիպտական դիցաբանության մեջ *Բաբը* ճանաչված էր ինչպես մարդա- կամ կենդանանման մի աստվածություն շան կամ բաբառնի գլխով և ֆալուսով երեկցիաի վիճակում: **Սովորաբար նա ներկայացվում էր շների ուղեկցությամբ: Համարվում էր մարդու սեռական ունակության անձնավորումը և ստորգետնյա աշխարհի կողպեքը:**⁵

Շների հետ նրա պատկերումը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ նա պատկանում է *Կայենի*, այսինքն շների, հոգեվոր ցեղին, որ իրենց գործողություններում մարմնի հոտով

են առաջնորդվում: Ոստի բնական է, որ նրա անունը գտնում ենք Մովսես Խորենացու գտած *Քամի*⁶ տոհմաճառում:

Այստեղ ես ստիպված եմ մի փոքր շեղվելով թեմայից, ընթերցողի ուշադրությունը բևեռել Մովսես Խորենացու գտած Նոյի երեք որդիների տոհմաճառերի վրա, չնայած որ արդեն խոսել եմ նրանց մասին տարբեր առիթներով:

Հիմնավորվում եմ հատկապես Մովսես Խորենացու բերած աղբյուրի վրա, որովհետև, ինչպես գրել եմ վերոհիշյալ գլուխներում, Աստվածաշնչում Նոյի որդիների տոհմաճառերից հաջորդական կարգով տրված է միայն *Մեմի* տոհմաճառը տեղադրված Ծննդոց գրքի 11-րդ գլխում, որում, սակայն, չեն ներկայացված *Հաբեթի* և *Քամի* տոհմաճառերը: Այս վերջինների տոհմաճառերը գտնում ենք միայն «Ծննդոցի» 10-րդ գլխում, որտեղ տեղադրված են Նոյի բոլոր երեք որդիների տոհմաճառերը, բայց այնպիսի անստույգ և շփոթված ձևով, որ նույնիսկ Սեմի 10 – րդ գլխի տոհմաճառը չի համընկնում նրա 11-րդ գլխի տոհմաճառի հետ, չխոսելով արդեն *Քամի* և *Հաբեթի* տոհմաճառերի շփոթությունների մասին: Օրինակ, 10-րդ գլխում Նոյի կողմից օրհնված *Հաբեթի* տոհմաճառին են վերագրված Սուրբ Գրքում անիծված *Քամի* որդիներից Սագոգի, Թոբելի, Մոսոքի անունները: Ասուրի անունը միաժամանակ վերագրված է *Քամի* և *Մեմի* տոհմաճառերին, ինչը անհեթեթություն է, որովհետև ամեն մի անուն դա մի ստեղծող խոսք է և նույն խոսքը չի կարող տարբեր բաներ ստեղծել: Նմանապես Արամը վերագրված է Սեմին, երբ որ այն փաստը, որ հրեա Աբրահամը Աստվածաշնչում կոչվում է նաև Արամյան, արդեն նշում է Նոյի որդիների բնության ոչ համարժեքությունը:

Մովսես Խորենացու մեջբերված աղբյուրը որոշակի չափով փոխհատուցում է այդ բացերը ներկայացնելով Նոյի բոլոր երեք որդիների, այսինքն , Սեմի, Քամի և Հաբեթի (Ջրվանի, Տիտանի և Հապետոսթենի) տոհմաճառերը ըստ հաջորդական կարգի: Ավելին, *Մեմի* (Ջրվանի) տոհմաճառը այստեղ լիովին համընկնում է նրա Ծննդոց գրքի 11-րդ գլխում տեղադրված տոհմաճառի հետ, իսկ *Քամի* (Տիտանի) ու *Հաբեթի* (Հապետոսթենի) տոհմաճառերը համարյա ոչ մի ընդհանուր բան չունեն, կամ շատ քիչ բան ունեն, «Ծննդոց» 10-րդ գլխում տեղադրված իրենց իսկ տոհմաճառերի հետ, որտեղ վերջինների ներկայացուցիչները, որ Աստվածաշնչում իրենց հատուկ նշանակություններն ունեն, միտումնավոր կամ ոչ, շփոթված են: Թեև ամեն ինչ կարգին չէ նաև Մովսես Խորենացու ներկայացրած տոհմաճառերի մեջ, - օրինակ, *Մեմի* տոհմաճառի մեջ Կայնանի անթույլատրելի ներկայությունը⁷ կամ *Քամի*

տոհմաճառի մեջ երկու Արբելների կամ էլ Ներբովթի կասկածելի ներկայությունը, - վերջինները մի զարմանալի առանձնահատկություն ունեն, որը Աստվածաշնչի շատ հանելուկների վրա լուիս է սփռում: Այս առանձնահատկությունն այն է, որ Նոյի երեք որդիներից յուրաքանչյուրի սերունդների թիվը հավասար է տասը հոգու: Դա միօրինակ նրանց որոշակի ամբողջություն կազմելու նշան է: Այս փաստը մոլեց ինձ դասավորել նրանց տոհմաճառերը հորիզոնական կարգով, և ահա թե ինչ պատկեր բացվեց իմ աչքերի առջև.

<u>Սեմ</u>	<u>Քամ</u>	<u>Հաբեթ</u>
Արփաքսաթ	Քուշ	Գամեր

Կայնան Սաղա Երեք	Մեստրայիմ Նեբրովթ Բար	Փիրաս Թորգոմ Հայկ
Փաղեկ	Աներիս	Արամանյակ
Ռագավ	Աբել	Արամայիս
Սերուք	Քայադ	Ամասիա
Նաքովր	Աբել	Գեղամ
Փաբա	Նինոս	Հարմա
Աբրահամ	Նինուս	Արամ

Զարմանալիորեն նույն մակարդակի վրա հայտնվեցին հրեաների նախահայր *Երեքը*, *Բարը*, ում անունը *Բաբելոնի* անվան արմատն է կազմում, և մեր նախահայր *Հայկը*, որ լքեց *Բաբելոնը*: Նույն մակարդակին հայտնվեցին նաև Աբրահամն ու Արամը:

Մի կողմ դնելով վերջիններին, ում մասին խոսել եմ «*Шесть дней творения и седьмой день*» («*Харран (евр. Haran) и об арамействе Авраама*») և «*Почему старозаветный Бог называет Себя Богом Авраама, Богом Исаака и Богом Иакова*» իմ գործերի մեջ, հրավիրում եմ ուշադրություն դարձնել *Երեք*, *Բար*, *Հայկ* հորիզոնականի վրա:

Ինչպես ցույց եմ տվել իմ այլ գործերում, Նոյի երեք որդիներից միայն *Սեմն* է, որ մարդուն է ներկայացնում: Մյուս երկուսը, - այսինքն *Քամը* և *Հաբեթը*, - երկու հակառակ, - չարի և բարու, - ոգիներ են, որ կոիվ են տալիս մարդուն տիրանալու համար: Բնականաբար, դա վերաբերվում է նաև իրենց «հետնորդներին»: Նաև ցույց եմ տվել, որ այդ երեք որդիների մեջ որոշիչները *Քամն* ու *Հաբեթն* են իրենց հոգևոր «սերունդներով» հանդերձ, որովհետև նրանց ներկայությունից կամ բացակայությունից է կախված ոչ միայն մարդու (*Սեմի*) որակը, այլ նաև նրա կյանքը: Այսպիսով, լինելով *Երեքը Սեմի* օրհնված սերնդից, նա ներկայացնում է նաև նրան, ում մեջ ապրում է *Հաբեթի* հետնորդ *Հայկը*: Իսկ նրանք, ում մեջ բնակվում է *Բարը*, դուրս են մնում Կյանքի Գրքից, որովհետև *Բարը* ինչպես անիծված *Կաենի/Քամի* ներկայացուցիչ անմաքուր ոգու պատկերն է, որ Աստվածաշնչում խորհրդանշվում է Օձով: Վերջինը ներխուժելով *Երեքի* մեջ, դարձնում է նրան Օձի ստախոս ու մարդասպան պատկերն ու նմանությունը:

Տոհմաժառերից պարզ է դառնում, որ *Բարը* դա նույն ***Բաբելն է կամ, կրճատված, Բելը***, *Հայկի* հակառակորդը ըստ Ավանդուտյան: Այն փաստը, որ *Բարի* անունը *Բաբելոնի* անվան հիմքն է կազմում, միանշանակ ցույց է տալիս, որ հենց *Բարն* էր (այսինքն *Բելը*) *Բաբելոնի* հիմնադիրը և իրեն աստծու տեղ դրաց երկրի առաջին արքան և ոչ թե *Նեբրովթը*, ինչպես մտածում են, հատկապես որ, ինչպես նշել էի, *Բաբելը Բաբելոնում* աստվածների հայրն էր համարվում:⁸ Իսկ այն փաստը, որ *Բաբել/Բելը Քամի/Տիտանի* սերնդին է պատկանում, նշանակում է, որ նրա ամբողջ ցեղը անիծված է և, հետևաբար, անիծված է նաև իր քաղաք *Բաբելոնը*:

Հետաքրքիր է, որ աշխարհի ստեղծման մասին ակադյան պատմությունը *Բաբելոնի* հիմնադրումը կապում է «*Ժամանակների սկզբի*» հետ,⁹ ինչը պարզ ցույց է տալիս, որ *Բարը* դեի, կամ Աստվածաշնչական Օձի, անուններից մեկն է, - այն օձի, որ հակադրեց իր խոսքը Տիրոջ Խոսքին, դնելով այսպիսով ինչպես ժամանակի, այնպես էլ *Բաբելոնյան խառնաշփոթության* սկիզբը:¹⁰ Նախանձով լցված մարդու հանդեպ, որն ստեղծված էր ըստ Աստծո պատկերի և նմանության, նա որոշեց սպանել մարդուն, այսինքն

կոռուստիացնելով նրան՝ մահկանացու դարձնել և փոխանցելով նրան իր սեփական անմաքուր պատկերն ու նմանությունը՝, իշխանանալ նրա վրա:

Համաձայն Մովսես Խորենացու բերված Ավանդության տարբերակին, *Բել Տիտանյանը* ճիշտ այդպես, սպանությունների միջոցով է գալիս իշխանության:

«...այն ժամանակ, - գրում է Մովսես Խորենացին, - երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ: որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերի կողմ էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու, (և) Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել:»¹¹

Ավանդության այս մանրամասնությունը համահունչ է ինչպես Ենոքի Գրքի հաղորդմանը հրեշավոր հսկաների մասին, որ ծնվել էին մեղավոր հրեշտակների և մարդկանց դստերի կապից, այնպես էլ ժամանակների վերջի հետ կապված աստվածաշնչյան մարգարեություններին: *«Ամէն մարդու սուրն իր եղբոր դէմ է լինելու»* (Եզեկ 38,21), - ասում է Եզեկիելը, նկարագրելով Գոգի և Մագոգի ժամանակները:

Նույն փաստը նշում է նաև Եզրասը՝ գրելով. *«Եվ բոլոր ընկերները դուրս կգան միմյանց դէմ, ապա միտքը կթաքնվի և բանականությունը կհեռացվի իր պահեստարան»:* (3 Եզրաս 5: 9)¹²

Այն, որ *Բելին* հաջողվեց ամբողջ երկիրը գրավել ի շնորհիվ սպանությունների, հետևում է նաև եպիսկոպոս Սեբեոսի ներկայացրած Հայկի Ավանդության տարբերակից, որտեղ ասվում է.

«Երբ խառնաշփոթի մեծ տանջանքներից, կարծես ծննդաբերության ցավերից ծնված, տեղի ունեցավ այն, որ հսկայական ամբոխը սփռվեց մեծ անապատում, աղմուկի անհասանելի վայրերում, ապա իր ընկերների վրա սուրը բարձրացրեց Տիտանը (այսինքն, Աստվածաշնչի Քամր/Կայենը), որն առաջինը թագավորեց երկրի վրա: Բել Տիտանյանը, չգիտակցելով իր բնությունը և պատկերացնելով իրեն ամբողջ մարդկային ցեղից բարձր, ամբողջ մարդկային ցեղը կոչ էր անում ենթակվել իրեն»¹³

Այստեղից պարզ է դառնում, որ *Բել Տիտանյանը* այս աշխարհի իշխանի մարմնավորումն է, ով չի գիտակցում իր բնությունը, և այն, որ նկարագրածը դա մի մարգարեություն է *նոր երկրի* և *նոր երկնքի* երևան գալու մասին:

Հովհաննեսի հայտնությունը նման ձևով է մեզ հաղորդում նոր աշխարհի ծնունդը.

«Եւ երկնքում մեծ նշան երեւաց. մի կին՝ արեգակն իր վրայ առած, լուսինն իր ոտքերի տակ եւ իր գլխի վրայ մի պսակ՝ տասներկու աստղերից: Նա յոյ էր ու ճշում էր երկունքի մէջ եւ բազում ցաւերով մօտ էր ծնելու:»: (Հայտնություն 12: 1-2)

Այսպիսով, Ավանդությունից ակնհայտ է, որ *Բելը* «*չգիտակցելով իր բնությունը*» իրեն Աստծու ողջ արարչությունից բարձր էր դասում: Բայց Հայկը, ըստ նույն եպիսկոպոս Սեբեոսի, հիշեցրեց նրան իր ով լինելը, ասելով. *«Շուն ես դու ու շների ցեղից, դու ու քո ժողովուրդը»:*

Բնականաբար, խոսքն այստեղ այն հոգևոր ցեղի մասին է, որի ներկայացուցիչները իրենց արարքներում առաջնորդվում են մարմնի եսասեր ցանկություններով, այլ ոչ թե Արարչի ակտրուիստական Խոսքով:

Պետք է ասել, որ *Բարի* անունը խորը տպավորություն է թողել մարդկության ենթագիտակցության վրա և այս կամ այն ձևով պահպանվել է շատ ժողովրդների հիշողության մեջ: Անկախ այն վերաբերմունքից, որին նա առժանացել է տարբեր ազգերի կողմից, իրենց իսկ ենթագիտության մեջ նա մնացել է ինչպես Աստծո

հակառակորդ, որովհետև իր «քաղաք» *Բաբելոնը* հիմնված ընդդեմ Աստծո անունը կրող «քաղաք» *Եռուսաղեմի*, ըստ Հովաննեսի Հայտնության, պարունակում է, հաջորդ ալեգորիան. «*Մեծն Բաբելոն, մա՛յր երկրի պոռնիկների և գարշելիների*»: (Հայտ 17: 5)

Ըմբոստանալով իր Արարչի դեմ՝ *Բաբբ*, արարած լինելով հանդերձ իրեն Աստծու տեղ է դրել: Իսկ Աստծո արարած լինելը, ըստ մարգարե Եսայու, նշանակում է Աստծո հանդեպ *կանացի* սկզբունք ներկայացնել: (Ես 54: 5-7) ¹⁴ Դրանով է բացատրվում այն փաստը, որ *Բաբբ* հաճախ հայտնվում է նաև կնոջ պատկերով, օրինակ, *բաբելոնյան պոռնիկի* պատկերով, որը նա կրում է նաև տարբեր ժողովրդների լեզուներում: Դրանց միջոց կնշեմ հայ ընթերցողներին, հավանաբար, ծանոթ, ռուսական հեքիաթները *Բաբա-Յազաի* մասին: Կասկած չկա, որ վերջինիս պատկերի հիմքում հենց այդ Աստծու համար գարշելի արարածն է թաքնվում: *Բաբա-յազայի «անթիվ գորամասերի ուժը*», նրա ձիու վրա նստած պայքարը դյուցազնների դեմ, իր ամպրոպի նման հարձակումը նրանց տիրությունների վրա, նրա *օձամոր* կերպարը, իր *օձադաստրերի* գայթակղելը դյուցազններին «*հոտավետ*» խնձորներով, «*սառն աղբյուրի ջրով*», *փետուրի մահձակալներով*» և այլն, որ վերջիններին դեպի վախճան են տանում. ապա հերոսների հաղթանակը գայթակղությունների վրա, *օձամայր Բաբա-յազայի* ոչնչացումը իրեն դաստերի հետ միասին, նաև *Բաբա-Յազայի* երկու աշխարհների սահմանին գտնվող խոճիթը, որ մեռածների թագավորության դարպասն է և այլն ¹⁵ – այս ամենը ոչ այլ բան է, քան հեքիաթային ձև ստացած նույն *Հայկի* ու *Բելի/Բաբի* պայքարի արձագանքը, որ դյուցազնները, այսինքն Աստծո զավակները, մղում են իրենց ժողովուրդն *Բաբելոնից* դուրս հանելու համար, կամ մարդու անկման հետ կապված Սուրբ Գրքի պատմության արձագանքները: Հետևաբար, պատահական չէ նաև այն, որ *Բաբա-Յազան*, ըստ ռուս ժողովրդի հավատքների, օշտված է տիեզերքի տիրուհու առանձնահատկություններով:

¹⁶

Ինչպես արդեն գրել եմ իմ վերոհիշված գործերի մեջ, *Բաբբ* նույն սարսափելի պատկերով հայտնի է նաև, որպես Աստվածաշնչի *Լիլիթը*, որը դևի իսկական, կանացի անձնավորումն է: ¹⁷

Սակայն, խոսելով *Բաբի* մասին, պետք է նաև նշենք, որ Աստվածաշնչում *Բաբելոնի* առաջին թագավորը ոչ թե *Բաբն* է, այլ *Նեբբոլթը*, որը, ըստ Մովսես Խորենացու գտած տոհմաճառերի, *Բաբի* «հայրն» է: Դրանից, իմ կարծիքով, կարելի է սխալ եզրակացություն հանել, որ *Բաբելոնը Բաբի «ժամանակներից»* առաջ էր ստեղծված: Սակայն այդպիսի ենթադրությանը խոչնդոտում է ինքն *Բաբի* անունը, որ *Բաբելոնի* անվան արմատն է ներկայացնում: Չնայած այս ակնհայտությանը, նախորդները նրան շփոթում էին *Նեբբոլթի* հետ: Աստվածաշունչը վերջինիս անվանում է «*քաջ որսորդ Աստծու առաջ*», որի «*թագավորութիւնն սկիզբ առաւ Բաբելոնում և ընդգրկում էր Որեքը, Աքադն ու Քաղանէն, որոնք գտնուում էին Սենաար երկրում: Նեբբոլթն էլաւ այդ երկրից ու գնաց Ասուր, կառուցեց Նինուէն, Ռոբոթ քաղաքը, Քաղանը, ինչպէս նաեւ Նինուէի ու Քաղանի միջեւ գտնուող Դասեմանը: Սա մեծ քաղաք էր:*» (Մն 10: 9-12)

Ինչպես արդեն ասել եմ, մենք չենք կարող հայտնաբերել, թե որտեղ է Նոյի որդիների սերնդների հաջորդականության և անձերի հետ կապված սխալը, հետևաբար, կարծում եմ, որ պետք է ավելի շատ վստահել այն բանին, թե ինչ են մեզ ասում իրենց անունները: Ամեն դեպքում, *Բաբելոնը* (խոսքը նրա հոգևոր իմաստի մասին է), ըստ Սուրբ Գրքի, *Քամի* «ժառանգների» ստեղծագործությունն է, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է որոշակի պոռնկության ձևի անձնավորումը, այսինքն *Քամի* բոլոր հետնորդները, ըստ

էության, ներկայացնում են նույն *Քամի* ոգուն իր տարբեր հատկություններով: Դրա մասին վկայում է նաև այն փաստը, որ տարբեր ազգերի մեջ պահպանված *Նեբրովթի* մասին լեգենդները հատվում են այն ամենի հետ, ինչ ասվել է այստեղ *Բարի/ Բելի* մասին: Իսկ դա նշանակում է, որ *Նեբրովթը/Բարը/Բելը ու Քամը* նույն դեմքն են ներկայացնում, կարծես թե արտացոլված տարբեր թեքություն ունեցող հայելիներում:

Ահա թե ինչ է գրում, օրինակ, հրեական պատմիչ Հովսեփոս Փլավիոսը իր «*Հրեական հնախոսությունում*»: Պատմելով, որ ջրհեղեղից հետո *Նեբրովթը* կոչ է անում մարդկանց, որ իր պաշտպանությունն ընդունելով՝ վրեժխնդիր լինեն Աստծուց ջրհեղեղի համար, նա շարունակում է.

«*Այդպիսի հանդուգն անհնազանդությանը Տեր Աստծո հանդեպ նրանց հորդորեց Նեբրովթը, Նոյի որդի Քամի թոռը, քաջ մի մարդ որ առանձնանում էր իր հսկայական ֆիզիկական ուժով: Նա համոզեց նրանց, որ իրենց բարօրությունը չվերագրեն Տեր Աստծուն, այլ համարեն իրենց սեփական քաջության հետևանքը: Որոշ ժամանակ անց Նեբրովթը սկսեց գերագույն իշխանություն փնտրել, համոզված լինելով, որ մարդիկ միայն այն դեպքում այլևս չեն վախենա Աստծուց և իրենց երեսը կթեքեն Նրանից, երբ համաձայնվեն ապրել Նեբրովթի իշխանության ու պաշտպանության ներքո: Միննույն ժամանակ, նա պարծենկոտաբար հայտարարում էր, որ կպաշտպանի նրանց Տեր Աստծուց, եթե Նա կրկին ուզենա ջրհեղեղ բերի երկրի վրա: Նա խորհուրդ էր տալիս մի այնքան բարձր աշտարակ կառուցել, որ ջուրը չհասնի իր գագաթին և այսպիսով վրեժխնդիր լինել իրենց նախնիների մահվան համար*»:¹⁸

Ինչպես տեսնում ենք, այստեղ և հայկական Ավանդության մեջ խոսքը նույն *Քամյանի* մասին է: Դա հաստատում է նաև այն տեղեկությունը *Նեբրովթի* մասին, որը մենք գտնում ենք «*Աշխարհի ազգերի առասպելներում*»: Վերջիններից իմանում ենք, որ, ըստ հրեա ժողովրդի ազգադական ավանդության, *Նեբրովթի* անունը բացատրվում է որպես «*ողջ ժողովրդին Յահվեի դեմ ըմբոստացնող*»: Համարվում է, որ նա առաջինն էր, որ սկսեց կռվել այլ ժողովուրդների հետ: Հատկանշական է նաև հիշատակումը, որ նրան հաջողություն բերողը Ադամի ու Եվայի համար Աստծո կողմից կարված «*կաշվե հագուստ*» էր, որն տեսնելով՝ բոլոր կենդանիները ծնկի էին իջնում նրա առջև և նա սպանում էր նրանց: «*Կաշվե հագուստը*» ընկած մարդու գոռոգության նշանն է, նրա բոլոր բռնությունների և չարության աղբյուրը: Այլ կերպ ասած, այդ հայտարարությամբ շեշտվում է, որ նրա գործերը մարմնի գործեր էին: Եվ, իրոք, նա ներկայանում է որպես բռնի կռապաշտ, որ դեկավարում է *Բարեշունի աշտարակի* կառույցը մրցակոչ անելով Աստծուն: Այդ աշտարակը «*Ժամանակակիցները*» «*Նեբրովթի տուն*» էին կոչում:¹⁹

Այս ամենը մեզ բերում է այն եզրակացության, որ **Նեբրովթը Բարեշունի հիմնադիր Բարի սահմանումներից մեկն է**, քանի որ քաղաքի և աշտարակի անվան հիմքում *Բարի* անունն է դրված: Այս սահմանման իմաստը թաքնված է *Նեբրովթի* անվան արմատում: Բայց *Բարեշունյան շփոթությունը*, որի մեջ, ինչպես ասացի, մենք ապրում ենք մինչ այսօր, մեզ թույլ չի տալիս գտնել այդ արմատի խորին իմաստը: Միայն մի բան է ակնհայտ. այն, որ *Նեբրովթը* անձնավորում է երկրի չարության և խաբեության ուժերին, որոնց ներկայացնում են իրենց աստվածներ համարող երկրային թագավորները: Դրա մասին է մեզ հաղորդում Հովաննես առաքելի Հայտնությունը, որ բացահայտում է մեր առջև *Բարեշունյան պոռնիկի* էությունը.

«*Եւ այն կինը, որին տեսար, մեծ քաղաքն է, որ թագաւորում է երկրի թագաւորների վրայ*»: (Հայտն 17: 18)

Այս քաղաքի իշխանությունը հիմնված է անձնական աշխարհայացքների անվերջ պայքարի վրա, որն առասպելական լեզվով կոչվում է *լեզուների խառնաշփոթ*: Այդ վերջինի ներկայության պատճառը սիրո, կյանքի և միասնության աշխարհայացքի բացակայությունն է, որի կենսական նշանակությունը հասկացողների համար ապացուցվում է իսկն մարդու կազմվածքով. մեկ գլուխ մեկ մարմնի վրա: Դա է արարածի դիմացկունության և Աստծու ժողովուրդ լինելու պայմանը: Ճիշտ այդ ճշմարտության հետ է կապված Աստծո առաջին պատվիրանի պահանջը.

«Ե՛ս եմ քո Տէր Աստուածը, որ քեզ հանեցի Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից: Ինձնից բացի այլ աստուածներ չպիտի լինեն քեզ համար» (Ելք 20: 2-3)

Այնպես որ *Բաբելոնյան խառնաշփոթի* պատճառը Աստծուն դեմ ելած արարածի ոգու գոռոզությունն է խորհրդանշված *Բաբելոնյան աշտարակով*: Ըստ էության, Աստծու բարու և սիրո աշխարհայացքին հակադրվում է չարի աշխարհայացքը, որը շատ թշնամական աշխարհայացքներ առաջացրեց և հետևաբար տարբեր ժողովուրդներ, որ ամբողջ երկրով սփռվելով՝ *Բաբելոնի* կերպարն ընդունեցին, որը նման է բազմազուլիս մի վիշապի: Լեզուների և աշխարհայացքների շփոթությունը ակնհայտ է նաև այսօր, քանի որ նույն գաղափարը նույն (թեև հնչափոխված) արմատով տարբեր ազգերի կողմից տարբեր կերպով է հասկացվում: Այնպես որ շատ անգամ մարդիկ խոսելով նույն բանի մասին, իրար չեն հասկանում, կարծելով թե խոսում են տարբեր նյութերի շուրջ: Եւ այսպիսով յուրաքանչյուր ժողովուրդ, առանց իրեն հաշիվ տալու դրա մեջ, վերածվում է նշված բազմազուլիս վիշապի գլուխներից մեկի, ձեռք բերելով այդ սողունի, - որն այս աշխարհի *Իշխանն* է, - պատկերը:

Եվ միայն Աստծո ժողովուրդն է, որ դեմ է կանգնում իրեն, - այն ժողովուրդը, որի մասին, ի դեպ, ասվում է, որ նա **«ազգերի մեջ չպիտի դասուի»**, (որ վիշապի գլուխներից մեկը չլինի), այսինքն, դա մի ժողովուրդ է ժողովուրդներից վեր: Ահա թե ինչպես է Թվերի գիրքը բացահայտում նրա էությունը.

«Լեռներից եմ տեսնում նրան, բլուրների բարձունքից եմ նայում նրան: Ահա կայ մի ժողովուրդ, որ առանձին պիտի բնակուի, ազգերի մեջ չպիտի դասուի: Ո՞վ է ճշտել Յակոբի սերնդի թիւը, ո՞վ է հաշուել Իսրայելի ցեղերը: Երա նի թէ ես մեռնէի այդ արդար մարդկանց հետ, եւ իմ յետնորդները լինէին նրա յետնորդների նման»:» (Թվ 23: 9-10)

Այսպիսով, Մուրբ Գիրքը պարզ ասում է, որ **Աստծո ժողովուրդը միայն «արդարներն են կազմում**, որ, ինչպես հայտնի է, ծնվում են տարբեր ազգերի մարմնից: Բայց նրանք տարբերվում են մյուսներից նրանով, որ, չնայած իրենց մեղավոր մարմնից ծնված լինելը, ամենայնիվ ունեն աստվածաստեղծ մի հոգի, որն ակնհայտվում է նրանց մեջ խղճի առկայությամբ և նաև նրանով, որ Աստծո Խոսքը հաճելի է նրանց սրտին և բանականությանը: Հանուն հենց այդպիսիների է ըմբոստացել *Հայկը* այս աշխարհում իշխող բազմազուլիս վիշապ *Բաբի/Բելի* դեմ:

Այժմ տեսնենք, թե ո՞վ էր նա իրականությունում – այն միակը, որ այս աշխարհի տիրոջ *Քամյան Բաբի/Բելի/Նեբրովթի* առջեվ ծնկի չեկավ և իր ժողովուրդը հանեց նրա իշխանության տակից:

Հայկը

Մովսես Խորենացու ներկայացրած տոհմաձառներից մենք իմանում ենք, որ *Հայկը Հաբելթի* սերնդից է, ինչը, ինչպես նշել եմ Նոյի որդիների առեղծվածին նվիրված իմ

վերոհիշյալ գրքի գլուխներում, նշանակում է, որ *Աստծո կողմից սիրված Սուրբ Ոգուց* է ծագում. դա ցույց է տալից *Հաբեթի* անվան իմ էթիմոլոգիական վերլուծությունը ըստ որին նա համապատասխանում է հնագույն հայկական *հավետ* ածականին և հին պարսկական *հավե*-ին նույն «*հավերժական*» իմաստով, որ նշանակությամբ ու հնչողությամբ նույնանում է աստվածաշնչյան YHWH (*Յահվեհ*) տետրագրությանը, որը մեկնաբանվում է որպես «*Ես այն Աստուածն եմ, որ է*»: (Ելք 3.14), այսինքն, Նա, որ հավերժ է. *Նա, ով է, էր և կլինի*: Այլ կերպ ասած, խոսքը օրհնված Սուրբ Հոգու մասին է (Ծննդ. 9.27), որը *Սենում* բնակվելով՝ փոխակերպում է նրան ըստ Աստծո կերպարի և նմանության: «*Աստուած թող բարգաւաճեցնի Յաբեթին, նա թող բնակուի Սեմի տանը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան*»: (Ծն 9: 27), - կարդում ենք Ծննդոցում:

Ինչպես հայտնի է նրանց, ովքեր իմ գրքերին ծանոթ են, Սեմի «*տունը*» Սեմի հոգին է: Իսկ այն, որ *Հաբեթը* ինքն *Տերն է*, հաստատում է նաև «*Հորեյանների գիրքը*», որտեղ *Հաբեթի* փոխարեն նույն օրհնությունը *Տիրոջն է* նշում. «*Օրհնյալ լինի Սեմի Տեր Աստվածը, Աստվածն թող բնակվի Սեմի տանը*»: ²⁰

Այսպիսով նաև *Հայկը*՝ լինելով *Հաբեթի* «սերնդից», ներկայացնում է նույն Փրկչին, որին ճանաչում ենք ինչպես *Հիսուս Քրիստոս*: Այդ փաստը հաստատում է նաև *Հայկի* անվան էթիմոլոգիական վերլուծությունը, որը աստվածաշնչական *Յահվեհ*, կամ *Եհովայի* անվան մասն է կազմում, չնայաց որ ինվերսիաի ենթարկված, բայց նույն նշանակությամբ:

Ըստ Մովսես Խորենացու ներկայացրած տոհմաճառի, *Հայկը* ծնունդ է առել Նոյի Աստվածաշնչում հիշատակված թոռ *Թորգոմից*: Վերջինիս անվան իմաստը, ինչպես ցույց էմ տվել իմ «*Шесть дней творения и седьмой день*» գրքում, - «*մեկնաբան*» է, կամ «*հոգևոր գրույցների թարգմանիչ*», ինչը նշանակում է, որ Հայկը ծնվել է **Աստծո խոսքի մեկնաբանությունից, կամ, եթե մի այլ կերպ ասենք, Հաբեթի հոգևոր ժառանգությունից**: ²¹

Շատ հատկանշանական է *Հայկի* անունը, կազմված երկու – «*հայ*» և «*կ*» արմատներից: Դրանցից առաջինը *Հայր* բառի կրճատված ձևն է: «*Հ*» շնչեղ հնչունի առկայությունը այդ բառի սկզբում ի ցույց է բերում որ իսկզբանե բառը վերաբերվել է *երկնային Հորը*, որը, ինչպես գիտենք, ոգի է (Հովհ 4: 24), այսինքն «*այր*»-ը ոգի է նշանակում, ավելի ճիշտ *Երկնային Հոր ոգի*: Հենց այդ փաստին է պարտական այն, որ «*այր*» արմատը միջազգային հասարակության կողմից ընկալվում է *օդի* իմաստով – *aero, air, aire*, և այլն:

Համաձայն հայկական և վրացական ավանդությունների, *Հայկը* հայերի (արմենների) նախահայրն է, որի անունն են կրում *հայերը*: Ժամանակի ընթացքում «*կ*» արմատը հավաքական իմաստ ունեցող վերջածանցի վերլուծվեց, այսինքն հոգնակի թվի ցուցանիշը դարձավ, և բառը վերաբերվեց բոլոր նրանց, ովքեր իրենց *հայ* են համարում, իսկ Հայկ անունը դարձավ երկրի և ազգի անուն: «*Հայ*» արմատը, ինչպես գրել էմ իմ «*Загадочный Арапат*» գրքում, նույն հրեական «*հայահ*»ն է, որը կարող ենք բացատրել ինչպես «*հավերժ ոգի*», մինչդեռ ամբողջովին *Հայկը*՝ «*կենդանարար ոգի*» (1 կոր 15: 45) է նշանակում, կամ «*հավերժ ապրող Աստված*»: Բացի դրանից, *այր*-ը հրեական *ել*-ի համանմանն է: Այդ երկու բառերը խոտորումներ են: Հետաքրքիր է, որ Աստվածաշնչի Աստծո սահմանումներից մեկը հնչում է ինչպես *Ելոհայ* և նշանակում է «*Աստված իս*», կամ, ավելի շուտ, «*Աստված իմ, որ ապրում է*»: Հայկական «*հայր*»-ը, կամ «*այր*»-ը նույն արմատի հնդեվրոպական ձայնն է: Հայկական լեզվում նա ունի իր «*հեր*» համանիշը,

որից ծագել է գերմանական «Հեռ»-ը, որը նույնպես նշանակում է «Տեր», կամ «Տեր Աստված»:

Այսպիսով, «Հայր»-ը այն նույն դեմքն է, որ հնդեվրոպական ժողովրդների հիշողության մեջ տպավորվել է, որպես *Արիացի*, - այն, որն անխոնջորեն սերնդից սերունդ ուղեկցում է մարդու հոգին և ժամանակների վերջում կհանգեցնի նրան իր ազատագրմանը մարմնի ստրկությունից և կփրկի նրան այն ոգուց, որ Ավանդությունը *Բել* է կոչում:

Ինչպես ցույց է տվել նույն «*Загадочный Апарат*» գրքում, այր բառը բոլոր հին ազգերի անվան արմատն է կազմում, ներառյալ աստվածաշնչական *Բարաել*, *Երուսաղեմ*, *Արիել* (Ես 29: 1), *Օրիոն* անվանումները: Բայց *Հայկին*, հունական առասպելի հայտնի հերոսի *Օրիոնի* հետ, բացառությամբ անունը, ոչինչ չի կապում: *Հայկն* ու *Օրիոնը*, Աստվածաշնչում հրեական «*Կրսի*» բառի, որը նշանակում է «*հսկա համաստեղություններ*», հայերեն և հունարեն թարգմանություններն են, որ գտնում ենք Յոբի (38: 31; 9: 9), Եսայու (13.10) և Ամոսի (5: 8) գրքերում:

Իհարկե, *Օրիոն* համաստեղությունը գաղտնագիր նշանակություն ունի Աստվածաշնչում: Դա միայն մի փոխաբերություն է, որ վերաբերվում է երկնային Հորը կամ Հայկին: Այդ են արտացոլում Քրիստոսի հետևյալ բառերը.

«Ես՝ Յիսուսը, ուղարկեցի իմ հրեշտակին, որ այս բանը վկայի ձեզ՝ եկեղեցիներին: Ես արմատ եւ սերունդ եմ Դաւթից, պայծառ աստղը առաւօտի.» (Յայտն 22: 16)

Բայց Հայկի Աստված լինելը վկայվում է ոչ միայն նրա անունով, այլ նաև նրա բնույթով, նպատակներով և գործերով, որոնք համապատասխանում են աստվածաշնչական *Յահվեի/Եհովայի* բնույթին, նպատակներին և գործերին: Օրինակ, հայ և վրաց ժողովուրդների ավանդություններում *Հայկը* կոչ է անում երկրպագել միայն Արարիչին, այլ ոչ թե *Բել/Բար* արարածին, որ կռապաշտ մի մարդ է: Վրացի պատմաբան Լեոնտի Մրովելին (IX դար) իր «*Քարթլիս ցխովրերս*» («*Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմություն*») գրքում մեջբերում է *Հայկի*, - որ վրացիների հիմնադիր *Կարտլոսի* ավագ եղբայրն էր, - հետևյալ խոսքերը.

«Մենք միայն Արարչին պիտի ծառայենք և ոչ ուրիշ մեկին»: Նա դա ասում է Բելի դեմ, որը- արարած լինելով՝ իրեն աստծու տեղ էր դրել:

Ինչպես տեսնում եք, Հայկի բառերը համապատասխանում են աստվածաշնչական Աստծո վերոհիշյալ առաջին, ամենակարևոր պատվիրանի պահանջին:

Այս կապակցությամբ պարզ է դառնում, թե ինչու *Բել Տիտանյանին*, որին, ըստ Մովսես Խորենացու, «*պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել*» և որը, ըստ պատմաբան Սեբեոսի վկայության, «*չգիտակցելով իր բնությունը և պատկերացնելով իրեն ամբողջ մարդկային ցեղից բարձր, ամբողջ մարդկային ցեղը կոչ էր անում ենթարկվել իրեն*» (Սեբեոս: 1-ին, Սանկտ-Պետերբուրգում, 1862 թ.), միայն *Հայկն* էր, որ չցանկացավ ենթարկվել, և իր ժողովրդի հետ դուրս եկավ *Բաբելոնից*, այսինքն, *Բելի* իշխանության տակից: Նույն Մ. Խորենացին մեզ տեղեկացնում է, որ նա «*չվեց գնաց Արարադի երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, որ գորավոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոծիներով, նրան հարած եկվորներով և բոլոր տանուտեղով:*» (Էջ 83-84)

Դրանով հանդերձ Հայկի Ելքի պատճառը և գործընթացը նույնական են հրեաների Եգիպտոսի և, մասնավորապես, Բաբելոնի գերությունից Ելքերի պատճառի և գործընթացի հետ: Օրինակ, Եսաու գրքում կարդում ենք այդ առումով.

«Ղո՛ւրս եկէք Բաբելոնից, փախէ՛ք քաղղէացիներից, ուրա՛խ ձայնով պատմեցէք, թող լսելի լինի այն, մինչեւ աշխարհի ծագերը յայտնեցէ՛ք ու սասցէ՛ք, թէ՛ «Տէրը փրկեց իր ծառայ Յակոբին»» (Ես 48: 20, 52: 11)

Կամ Միքիաի գրքում նույն *Բաբելոնից* դուրս գալու կապակցությամբ.

«Ուտքի՛ կանգնիր եւ գնա՛, քանի որ դու հանգիստ չունես այնտեղ, պղծութեան պատճառով սաստիկ ապականուեցիր, հալածուեցիր առանց որեւէ մէկի հալածանքի» (Միք 2: 10)

Նույն կոչը գտնում ենք Հովհաննէս առաքելի Հայտնության մեջ.

«Նա աղաղակեց բարձր ձայնով եւ սասց. «Ընկա՛ մեծն Բաբելոնը, որ եղել էր բնակավայր դուերի, արգելանոց ամէն տեսակ պիղծ ոգիների ու ամուր բանտ ամէն տեսակ անմարտուր եւ ատելի ոգիների, քանի որ նրա կատաղի պոռնկութեան գինուց հարբեցին բոլոր ազգերը եւ երկրի թագաւորները, որոնք պոռնկութիւն արեցին նրա հետ: Եւ երկրի վաճառականները հարստացան նրա անչափ զեխութիւնից»: ⁴**Ապա երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ելէ՛ք դրա միջից, ժողովո՛ւրդ իմ, որպէսզի մասնակից չլինէք դրա մեղքերին եւ չընդունէք դրա պատուհասները»** (Յայտն 18: 2-5)

Այսպիսով, Աստվածաշնչում և Հայկի Ավանդությունում *Բաբելոնը* «ամէն տեսակ պիղծ ոգիների» տեղ է, որտեղից Աստծու զավակները դուրս պիտի գան:

Իսկ այժմ տեսնենք, թե որտեղ է Հայկը դուրս բերում իր ժողովուրդը: - Փաստորեն, ստացվում է, որ նա դուրս է բերում նրան նույն վայրը, որտեղ հրեաներին դուրս է բերում *Յահվէն*, այսինքն, Ավետյաց երկիր, կամ Աստծո թագավորություն, դեպի կենաց ծառը, դեպի *Արարատ լեռնաշխարհը*, որտեղ, ինչպես գիտենք Աստվածաշնչից, գտնվում են դրախտից դուրս եկող չորս գետերից առնվազն երկուսի - Եփրատի և Տիգրիսի – ակունքները: (Մն 2:14)

Թեև կրոնական գրականության մեջ *Մինայ* լեռն է համարվում Աստծո լեռը, դա, ինչպես գրել եմ *«Загадочный Апарат»* գրքում, անհեթեթություն է, ճշմարտության դիտումնավոր խեղաթյուրում, քանի որ, ինչպես տեսնում ենք Սուրբ Գրքի տեքստից, հենց *Արարատյան լեռնաշխարհն* է այն տեղը, որ ներկայացված է որպէս երկրային դրախտավայր: Այնպես որ, խոսելով Եգիպտոսից Աստծու որդիների Ելքի մասին, Աստվածաշունչը նշում է, որ Աստված առաջնորդեց նրանց դեպի այն լեռը, որ իր ժառանգությունն է իր ձեռքով պատրաստված. Ահա այսպես է դա հաղորդում Ելքի գիրքը.

«Տա՛ր, բնակեցրո՛ւ նրանց այն լեռան վրայ,որ ժառանգութիւնն է քո,քո պատրաստած բնակավայրում, որ սրբութիւն էս դարձրել, Տէ՛ր:Տէ՛ր, քո ձեռքէ՛ ըր պատրաստեցին այդ» (Ելք 15: 17)

Իսկ Տիրոջ ձեռքով պատրաստված բնակավայրը երկրային դրախտն էր, այսինքն *Արարատյան լեռնաշխարհը*:

Նաև գրված է, որ Տերը առաջնորդում է իր ժողովուրդը դեպի իր «սուրբ բնակավայրը». **«Արդարութեամբ առաջնորդեցիր քո այս ժողովուրդին, որին փրկեցիր, քո զօրութեամբ մխիթարեցիր նրան քո սուրբ բնակավայրում»** (Ելք 15: 13)

Կասկած չկա, որ «սուրբ բնակավայրը» նույնպես ենթադրում է Աստծու ստեղծված դրախտը: Դրանից հետո կարդում ենք.

«Այնտեղ Աստուած ժողովրդին տուեց օրէնք ու իրաւունք եւ այնտեղ էլ փորձութեան ենթարկեց նրան.» (15: 25)

Հայկի հետ կապված ավանդություններում նույնպես գտնում ենք ուղերձներ, որոնք ցույց են տալիս, որ Հայկը իր *Բաբելոնից* հանած ժողովրդին տարբեր տեսակ ծանոթություններ է թողել: Օրինակ, ըստ հնագույն հայ աստղագետ Անանիա Շիրակացուի (7-րդ դար), Հայկը՝ հնագույն հայկական օրացույցը ստեղծելով, իր որդիներին տվեց ժամանակի գաղափարը, իսկ տարվա ամիսները կոչեց իր որդիների ու դուստրերի անուններով: ²²

Բացի դրանից, հայորդիները այն ժամանակներից պահպանել են իրենց հոգու վրա գրված մի հիշողություն, որ ներառում է այնպիսի հասկացողություններ, ինչպիսին են մարդասիրությունը, մարդու մասին դատողությունը ոչ ըստ մարմնի, կամ ըստ հարուստության, կամ ըստ իր հագուստի, այլ ըստ իր ոգու; արդարության ընկալումը ոչ ինչպես անհատական հասկացողություն, այլ որպես ընդհանուր գաղափար; ճշմարտասիրություն, համեստություն ինչպես մարդու արժանապատվության հիմք; աշխատասիրություն, եղբայրասիրություն և այլն:

Այն բոլորը, ինչ նշվեց այստեղ, մեկ անգամ ևս վկայում է, որ Արարչի Խոսքը տրված է Աստծո Որդիներին ճիշտ *Արարատյան լեռների* վրա, և ոչ թե *Մինայի* թերակղզում: Դրա մասին վկայում է նաև այն փաստը, որ Ենոքի հնագույն գրքերում *Մինայ* կամ *Միոն* լեռներն չեն հիշատակվում: *Մինայը* հիշատակվում է միայն իր Առաջին գրքի առաջին գլխում, բայց միակն լինելով ակնհայտ է թողում, որ այդ անունը ուշ է տեղադրվել այնտեղ կամ թարգմանչի, կամ էլ արտագրողի կողմից, որը այդպիսով իր հասկացողությունն է ներկայացրել համաձայն Աստծո լեռան վերաբերյալ ընդունված կարծիքի. «կգա Մինայ լեռը և հայտնվելով իր գորքերի հետ և իր գորության ուժով կգա երկնքից»: (Книга Еноха 1: 4) Այս է Մինայ լեռան միակ ներկայությունն Ենոքի բոլոր մեզ հասած գրքերում: Միուս բոլոր դեպքերում այնտեղ նշված են *Ar, Ardis, Հերմոն, Արդաստ* անունով լեռները: ²³

Դա մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ Սուրբ Գրքում նկարագրված բոլոր իրադարձությունների կենտրոնը *Արարատյան լեռնաշխարհն է*, որը աստվածաշնչական առակներում խորհրդանշում է Աստծո արարչության ողջ էությունը, նրա մանրատիպարը:

Այս առումով հետաքրքիր է նաև այն, որ *Արարատեան երկիրը*, ինչպես Ավանդության, այնպես էլ Աստվածաշունչի մեջ, կապված է արարչության *հյուսիսային եզրի* հետ: Թեև պատմական *Բաբելոնի* համեմատ *Արարատյան երկիրը*, իսկապես, *հյուսիսում* է գտնվում, աստվածաշնչական առակներում *հյուսիսը* շատ դեպքերում նշանակում է Աստծո բնակավայր, որը հեռու է մարմնի ցանկություններից, ²⁴ այսինքն, «*հյուսիս*»-ը նշանակում է «*վերև*», ցույց տալով մեզ, որ *Բաբելոնը* և *Արարատյան երկիրը* խորհրդանշում են նույն լեռնաշխարհը, որը, ինչպես և մարդկային հոգին, կախված է այն ոգուց, որը բնակում է նրան, և ըստ այդ կամ Աստծո աշխարհի պատկերն է ներկայացնում, կամ էլ այս ընկած աշխարհի պատկերը. Այլ կերպ ասած, նույն լեռնաշխարհը (կամ նույն արարչությունը) լցված Աստծո Ոգով, կոչվում է *Արարատյան երկիր*, իսկ լցված *Քամի* ոգով՝ *Բաբելոն*:

Այսպիսով, նշելով, որ *Հայկը* իր ժողովրդին առաջնորդում է դեպի «**հյուսիսային կողմերում գտնվող Արարադի երկիրը**» (Մ. Խորենսկի), Ավանդությունը բացահայտում է իր խորին իմաստը, որ մարդկանց համբարձմանն է վերաբերվում: Այս վերջինը հեթանոսների աչքում հավասար է կյանքի կորստին կամ նրա բացակայությանը: *Բելը* հենց այդպես է անվանում աշխարհը, ուր *Հայկը* առաջնորդեց իր ժողովրդին, - «**ցուրտ սառնամանիքների**» բնակավայր (Մ. Խորենացի, էջ 84),²⁵ այսինքն՝ կյանքի համար ոչ պիտանի, կամ ուղղակի՝ մահվան աշխարհ, որովհետև Աստծու Ոգու իշխանությունը մարմնի համար մահվան է հավասար:

Բայց չնայաց դրան *Բելը*՝ հետապնդելով *Հայկին*, «**հետևակ զորքի մեծ բազմությունը**» շտապում է հենց նույն տեղը՝ դեպի *հյուսիս*, «**ցուրտ սառնամանիքների**» *Արարատյան երկիր*, որ ուժով զավթի *Հայկին*, որովհետև հասկանում է, թե ինչ է նշանակում իրեն համար այդ «**հյուսիսային աշխարհը**»:

Դրա համար էլ նա գնում է այնտեղ լիովին խենթ մտադրությամբ, հավերժացնելով կոռուպցիան, ոչնչացնել Աստծո Ոգու Թագավորությունը և այդպիսով *Հայկի* վրա տիրանալ: Այլ կերպ ասած, նա բարձրանում է այնտեղ, ուր Աստվածն է, Նրան տապալելու և ինքն իրեն Աստված հռչակելու նպատակով:

Աստվածաշնչում Եսայիա մարգարեն խոսելով դևի այդ նույն մտադրության մասին, մեջբերում է վերջինի հետևյալ մտքերը.

«Մտքիդ մեջ ասում էիր. «**Երկինք կը բարձրանամ, իմ գահը կը դնեմ երկնային աստղերից աւելի վեր. կը նստեմ բարձր լեռան վրայ, հիւսիսի բարձր լեռների վրայ**.¹⁴ կը բարձրանամ ամպերից էլ վեր, կը նմանուեմ Բարձրեային»» (Ես 14: 13-14)

«*Հյուսիսն*» որպես Աստծո աշխարհի ներկայացնում է նաև Զաքարիա մարգարեն, որը ասում է.

«**Եւ նա աղաղակեց դեպի ինձ եւ խօսեց ինձ հետ ասելով. Տես՝ դեպի հիւսիսի երկիրը դուրս եկողները հանգչեցրին իմ հոգին հիւսիսի երկրումը**», (Զաք 6: 8)²⁶ այսինքն նրանք, ովքեր *Բարեւոնից* ուղվեցին դեպի *Արարատյան լեռնաշխարհ*, - որ, ինչպես նշեցի, «**ժառանգութիւնն է (Աստծո), (Նրա) պատրաստած բնակավայրը**» (Ելք 15: 17- նայիր վերը), կամ էլ նրանք, ովքեր հեռացել են մեղքից ու մահից, - հանգչեցրին Աստծու հոգին նույն *Արարատյան լեռնաշխարհում*, որը Կյանքի լեռնաշխարհն է:

Նույն նշանակությունն ունեն մարգարե Երեմիայի հետևյալ բառերը.

«**Այն ժամանակ Բարեւոնի վրայ պիտի գնձան երկինք ու երկիր եւ նրանցում եղած ամէն ինչ, քանի որ հիւսիսից պիտի գան նրան թշուառացնողները**, - ասում է *Տէրը*» (Երեմ 51: 49)

Երբ Աստվածաշունչը նշում է, որ **հիւսիսից պիտի գան Բարեւոնը թշուառացնողները**, վերջինների տակ ենթադրվում են նրանք, ովքեր կրում են Աստծո Ոգին, այսինքն իսկական *արյացիները* (նույնն է, *հայորդիները*), որ մարմնի ցանկություններին և հաճույքներին նախընտրում են հոգևոր աղբյուրներից բխած հավերժ ուրախությունները:

Երբեմն Աստվածաշնչում «*հյուսիս*» հասկացողությունը փոխարինվում է «*անապատ*» հասկացողությամբ: Օրինակ, Եգիպտոսից Աստծո որդիների դեպի Աստծո լեռը արտագաղթի դրվագում, վերջինը Սուրբ Գրքում «*անապատ*» է կոչվում, քանի որ հանելով ընտրյալներին հեթանոսական աշխարհից, Աստվածն մոտեցնում է նրանց Իր

աշխարհին, որը հեթանոսների աչքերում *անապատ* է թվում, որովհետև այնտեղ ոչինչ չկա, որ մարմնին հաճույք պատճառի: Ոստի այդ անապատը մտնողները, ըստ Սողոմոնի, հեթանոսների աչքերում մեռած են թվում:

«Անզգամների աչքին թուաց, - ասում է նա, - թէ նրանք մեռան, եւ նրանց ելքն այս աշխարհից համարուեց տանջանք, իսկ նրանց հեռանալը մեզնից՝ կործանում, բայց նրանք գտնուում են խաղաղութեան մէջ:» (Իմաստ 3: 2-3)

Սողոմոնի այս խոսքերը կրկին ցույց են տալիս, որ ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ *Հայկի* ավանդության մեջ, հարցը հոգու մահկանացու մարմնից դուրս գալու և մարդու մեջ Սուրբ Ոգու թագադրության մասին է, այսինքն, ժամանակավոր մեղքի մեջ կորված կյանքից դուրս գալու և Աստծո կողմից ստեղծված հավերժական կյանք մտնելու մասին, ինչը նշանակում է, որ այդ ելքը կատարվում է մարմնի կամ նրա կրքերի մահվան միջոցով: Քրիստոնեական մկրտությունը հենց այդ փաստն է նախանշում.

«Կամ չգիտե՞ք, - ասում է Պողոս առաքելը, - թէ մենք բռնորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահով է, որ մկրտուեցինք: Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ. Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով. որովհետեւ, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաեւ նրա յարութեան նմանութեամբ: Այս իմացե՛ք, որ մեր միջի հին մարդը խաչուեց նրա հետ, որպէսզի քայքայուի մեղքի մարմինը, եւ այլևս մենք չձառայենք մեղքին. որովհետեւ, ով մեռնում է, ազատ է մեղքից: Իսկ եթէ մեռանք Քրիստոսի հետ, հաւատում ենք, թէ նրա հետ էլ կ'ապրենք: Գիտենք, թէ Քրիստոս մեռելներից յարութիւն առած լինելով՝ այսուհետեւ չի մեռնի, եւ մահը նրան այլևս չի տիրի. որովհետեւ նա, որ մեռաւ, մեղքի համար մեռաւ մէկընդմիջտ, եւ նա, որ կենդանի է, կենդանի է Աստծու համար:» (Հրովմ 6: 3-10)

Իսկ դա նշանակում է, որ ելքերը վերաբերվում են մարգարեների և Հովհաննեսի *հայտնությունների* մեջ նկարագրված իրադարձություններին: Ըստ Հովհաննեսի Հայտնության, այն տեղը, որտեղ դրանք տեղի կունենան, **«երբայերէն կոչուում է Արմազէրոն»** (Հայտ 16: 16), որը նույն պես կապված է *Արարատյան երկրի* հետ, որովհետև ասված է.

«Վեցերորդ հրեշտակն իր սկաւառակից թափեց մեծ Եփրատ գետի վրայ. եւ ցամաքեցին նրա ջրերը. որպէսզի ճանապարհ պատրաստուի Արեւելքի թագաւորին:» (Հայտ 16: 12)

Իսկ այդ ճանապարհը, ինչպես ցույց եմ տվել իմ *«Зарадочный Апарат»* գրքում, անցնում է *Եփրատ* գետի *ակունքներով*, որ նույնպես գտնվում են *Արարատյան լեռնաշխարհում*:

Դատելով Ավանդության և Աստվածաշնչի տվյալներից, կարող ենք ենթադրել նաև, որ ճակատամարտի «տեղը» գտնվում է երկզվախանի Արարատի հարևանությամբ, քանի որ, ինչպես ասում է Ավանդությունը, հետապնդելով *Հայկին Բելը*՝ **«հասնում (է) բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ:»** (Մ. Խորենացի էջ 85)

Նույն եզրակացությանն են հանգեցնում մարգարե Չաբարիայի հետևյալ խոսքերը.

«Դարձեալ բարձրացրի աչքերս եւ տեսնում էի. ահա չորս կառքեր դուրս էին գալիս լեռների արանքից, եւ լեռները պղնձեայ լեռներ էին:» (Չաբ 6: 1)²⁷

Բացի այդ, *Հայկի* և *Բելի* միջև պատերազմի նկարագրությունը համապատասխանում է Քրիստոսի և Նեոի միջև տեղի ունեցած պատերազմի աստվածաշնչական նկարագրությանը: Հովհաննեսի Հայտնության մեջ, օրինակ, ասվում է.

«Ապա տեսայ զագանին, երկրի թագաւորներին եւ նրանց զորքերին՝ հաւաքուած, որպէսզի պատերազմ մղեն ընդդէմ նրա, ով հեծել էր սպիտակ ձիու վրայ, նաեւ ընդդէմ նրա զօրքի:» (Հայտն 19: 19)

Նկարագրելով *Բելի* հայտնվելը *Հայկի* հողի վրա ամբողջ իր բանակով, Մովսէս Խորենացին գրում է, որ հայկորդիները

«տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը, Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում:»

Եվ հետո նույն հեղինակը պատմում է այն կովի մասին, որ տեղի ունեցավ *Բելի* ու *Հայկի* միջև, որոնք, համապատասխանաբար, գլխավորում էին մեկը՝ բաբելոնացիներին, իսկ մյուսը՝ հայերին:

«Երբ երկու կողմից հսկաներն իրար մոտ հասան, երկրի վրա ահագին դողդոջութիւն բարձրացրին իրենց գրոհներով և իրար վրա ահ ու սարսափ էին գցում իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով թավալվում ընկնում էին գետնին» (Մ. Խորենացի էջ 85-86)

Վրաց պատմաբան Լեոնտի Մրովելին իր «Քարթլիս ցխովրեբայում» այդ կոնվըրսը համեմատում է «ալեկոցված տարրերի» հետ.

«Եվ նրանց միջուկ կատաղի պայքար տեղի ունեցավ, - գրում է նա, - ալեկոցված տարրերի նման »: Ուրբերից բարձացված փոշին հաստ ամպերի պէս էր. նրանց գրահի փայլը կայծականման էր. նրանց բերանի ճիչերը ամպրոպի ձայնի էին նմանվում, մեծ թվով նետերն ու քարերը դաժան կարկուտի նման էին ընկնում, նրանց արյունը ամպրոպի նման էր հոսում: Մեծ ճակատամարտ էր նրանց միջև և շատ մարտիկներ ընկան երկու կողմերից» (Լեոնտի Մրովելին «Քարթլիս ցխովրեբայ») ²⁸

Այդ կոնվըրսը, ըստ Ավանդության, տեղի է ունենում այն օրը, երբ, հետապնդելով *Հայկին*, *Բելը* գալիս է *Արարատյան լեռնաշխարհ*:

Եզեկիել մարգարեն նկարագրում է համանման Գոգի գալը Բուբալի երկիր.
«Եւ այն օրը, երբ Գոգը գայ Բուբալի երկրի դէմ, - ասում է Տէր Աստուած, - սաստկանալու է զայրոյթս, նաեւ նախանձս՝ իմ բարկութեան հրով: Ասել եմ, որ այն օրն Բուբալի երկրի վրայ մեծ երկրաշարժ է լինելու. ծովի ձկները, երկնքի թռչունները, դաշտերի զագանները, երկրի բոլոր սողունները, նաեւ երկրի երեսին գտնուող բոլոր մարդիկ դողալու են իմ դիմաց: Ճեղքուելու են լեռները, տապալուելու են ձորերը, կործանուելու են երկրի բոլոր պարիսպները: Սրի ահն եմ նրա վրայ բերելու, - ասում է Տէր Աստուած. - ամէն մարդու սուրն իր եղբոր դէմ է լինելու: Նրա դատաստանն արիւնով ու համաճարակով եմ տեսնելու, անձրեւների հեղեղներով ու քարէ կարկուտներով. հուր ու ծծումբ եմ տեղալու նրա ու բոլոր նրանց վրայ, որ նրա հետ կը լինեն, բազմաթիւ ժողովուրդների վրայ, որ կը լինեն նրա հետ: Այսպէս եմ ես ցոյց տալու իմ մեծութիւնը, սրբանալու եմ, փառաւորուելու ու ճանաչուելու ազգերի առաջ: Ու պիտի իմանան, որ ես եմ Տէրը:» (Եզեկ 38: 18-23)

Միևնույն ժամանակ նշանավոր է նաև *Հայկի* և *Բելի* ուժերի հարաբերակցությունը:
Նկարագրելով *Բելի* անթիվ զորքերը, Ավանդությունը նրանց համեմատում է մի «հանդուգն ու **անճոռնի ամբոխի**» զորության հետ, որ «**հեղեղի**» նման «**զառիվայրից ներքև է վիժում**» (Մ. Խորենացի էջ 85)

Քամից/Կայենից ծնված այս բազմությունը, ըստ էության, համապատասխանում է մոլազար դևերի ամբոխին, որ Հիսուս Քրիստոսը քշեց մի մոլի մարդու մարմնից, և երբ

դրանցից մեկին հարցրեց. «*Անունդ ի՞նչ է*», նա պատասխանեց. «*Իմ անունը **Լեզնոն է քանի որ բազում ենք***»:(Մկ 5: 8-9)

Այսպիսով, չարի ուժերի թիվը Աստվածաշունչը համեմատում է «*լեզնոնի*» հետ, իսկ փրկվածների թվի մասին ասում է.

«*Եսայիան աղաղակում է Բսրայելի համար. Թեև Բսրայելի որդկանց համարը ծովի աւազին պէս շատ լինի, **միայն մնացորդը կ'փրկուի***» (Հրոմ 9: 27)²⁹

Այսինքն արդարների թիվը հավասարեցնում է «*մնացորդին*»: Այդ «*մնացորդը*» Հայկի մասին Ավանդության մեջ հետևյալ ձևով է նշվում.

«*Շտապով հավաքում է իր որդիներին և թոռներին, քաջ և աղաղնավոր մարդկանց, **թվով շատ նվազ***, (ներքևը ճշտվում է, որ դրանց թիվը հասնում էր ***մոտ երեք հարյուր*** հոգու) *և ուրիշ մարդկանց, որ ձեռքի տակ ունենա*» (Մ. Խորենացի, էջ 85)

Այդ «*նվազների*», որ նախընտրել էին դուրս գալ *Բաբելոնից*, ընդհանուր թիվը նույն Աստվածն է բացահայտում՝ ասելով առաքյալ Պողոսի շրթերով.

«*Բայց աստուածային պատգամն ի՞նչ է ասում նորան. **Եօթը հազար մարդ** թողի ինձ համար, **որ Բահաղին ծունր չ'դրին**: Հենց այսպէս էլ այս ժամանակումը շնորհքի ընտրութեան պէս **մի մնացորդ եղաւ**» (Հրոմ 11: 4-5)*

Այսպիսով ստացվում է, որ *լեզնոն* կազմող կոապաշտ *բաբելոնացիներին*, կամ *Բահաղին (Բելի, Բաբի* Աստվածաշնչային տարբերակը) պաշտողներին, հակադրվում են ընդհամենը ***յոթը հազար*** Աստծու որդիներ, «***որ Բահաղին ծունր չ'դրին***»

Այս ամենը ևս մեկ անգամ հաստատում է, որ *Բելի* անվան տակ Ավանդության առակը ենթադրում է հնագույն Օձի ոգին կրողին, այսինքն, նրա պատկերին երկրի վրա, կամ *Նեռին*, որը իրեն Աստծու տեղ է դրել:

Ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ Ավանդության մեջ, *Նեռին/Բաբելոնին/Բելին* կործանում է սպասվում: Նկարագրելով այն՝ Մ. Խորենացին նշում է, որ վստահ լինելով իր գորքերի անթիվ բազմության վրա, *Բելը* չէր կարող պատկերացնել այն դիմադրողական ուժը, որ մի բուռ հայորդիները նրան ցուցաբերեցին:

«*Այս անպարտելի տարակուսական դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց, և հետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև բոլոր գորքը հասնի, որպէզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի: Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է իջվում. Այս կերպով՝ ճոխացած տիտանյանը կործանվում , ընկնում է գետին և շունչը փչում է: Իսկ ամբոխն այս քաջության ահագին գործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձրած կողմը» (Մ. Խորենացի, էջ 86)*

Այս առումով զարմանալի չէ, որ բանավոր հայկական ավանդություններից ոմանք *Հայկին* համարում են *Տիրոջ «աջը»*: Օրինակ, դրանցից մեկն է Վարդան Մաթոսյանի բերած տարբերակը, ըստ որին *Հայկը* – հայոց արքան, – *Բելին* սպանում է «*Տիրոջ ձեռքով*»: ³⁰ Իսկ այդ «*ձեռքը*» խորհրդանշում են, ինչպես տեսնում ենք, *Հայկի աղեղն ու*

նետերը: Նրանց իմաստը համընկնում է այն նշանակության հետ, որ *աղեղն* ու *նետերը* ունեն Աստվածաշնչում, քանի որ նրա բազմաթիվ տեղերում Աստվածը մարգարեների շրթերով ասում է Իր այդ ալեգորիկ գենքի օգտագործման մասին: Ես միայն երկու օրինակ կբերեմ:

«Տերը վերակացու պիտի լինի նրանց վրայ, նրա ***նետը պիտի թռչի ինչպես փայլակ:***» (Ձաք 9: 14), ասում է Չաքարիան: Կամ «Նրանց վրայ չարիք պիտի կուտակեմ ու իմ ***նետերն սպառեմ նրանց վրայ թափելով:***», - ասում է Տերը Երկրորդ Օրենքում (32: 23)

Այս ամենը ևս մեկ անգամ հաստատում է, որ Հայկի անվան տակ հասկացվում է Աստծո «*սիրելի Որդի*» Հիսուս Քրիստոսը (Մթ 3: 17), Ում Սուրբ Գիրքը «*Տիրոջ աջ*» է անվանում: ³¹

Հայքի հաղթանակը և *Բելի* մահը նույնպես հարաբերակցվում են մարգարեների և Հովհաննեսի հայտնությունների մեջ նկարագրված *Քրիստոսի* հաղթանակի և *Նեոի* վախճանի հետ, որի մասին, մասնավորապես, Հովհաննեսի Հայտնությունում ասվում է.

«*Եւ գազանը բռնուեցաւ, եւ նորա հետ սուտ մարգարէն էլ որ նշաններ էր անում նորա առաջին, որոնցով մոլորեցրեց նորանց որ գազանի դռշմն առան, եւ նորանց էլ որ երկրպագեցին նորա պատկերին. Եւ երկուսն էլ կենդանի կենդանի գցուեցան կրակի լիճի մէջը որ ծծմբով այրվում է: Եւ մնացեալները սպանուեցան ձիին վերայ նստողի սրիցը, որ նորա բերանիցը դուրս էր գալիս. եւ բոլոր թռչունները կշտացան նորանց մարմիններիցը:*» (Հայտն 19: 20-21), ³² այսինքն սպանվեցին Ճշմարտության Խոսքով, որ բացահայտում ու ոչնչացնում է սուտը և նրան կրողներին:

Ավանդության որոշ տարբերակներում *Բելը / Նեբրովթը* հենց այդպես է վախճանվում, - կրակի մեջ: Օրինակ, Վարդան Մաթոսյանի կողմից հայտնաբերված տարբերակներից մեկում ասվում է.

«*Նեբրովթ թագավորը, նվաճելով բազմաթիվ ազգեր, եկավ Հայաստան, հավակնելով, որ այնտեղ ճանաչվի ինչպես Աստված: Հանգաց հրաբուխի գագաթին, որը մինչ այսօր կրում է նրա անունը* ³³ *նա կառուցեց մի պալատ, որտեղից նետ ուղարկեց Աստծու վրա: Բայց նետը դիպավ Աստծո ձեռքում գտնվող ձկանը, որ Նա հենց նոր էր բռնել Վանա լճից: Այդ պահին կայծակի փայլը հարվածեց Նեբրովթին, և նա իր պալատի հետ միասին ***ընկավ հրաբուխի անհատակ խառնարանը, որից ջուր է հոսում:***»:*

Մաթոսյանի ներկայացրած մեկ այլ տարբերակի համաձայն, Հայկը *Նեբրովթին* սպանելով «*տեղափոխում է նրան Նեբրովթ լեռան գագաթը և մեխում այնտեղ, հետո հացաթխող ջեռոց կառուցելով, կախում է նրան այնտեղ և կրակ վառում: Աստծո հրամանով կրակը վերածվում է ջրի, եւ նրա փոշին մնում է թաղված հողի տակ, որպեսզի քամին չտարածի նրան: Բելի ժողովուրդը եւ ուղտերը սարսափից քարանում են*»: ³⁴

Այսպիսով, *Բելը/Նեբրովթը Արարատյան լեռնաշխարհում* է ընկնում:

Իսկ ահա թե ինչ է նույն առիթով մեզ հաղորդում մարգարե Եզեկիելը.

«*Իսրայելի սարերի վերայ պիտի ընկնես դու ինքդ եւ քո գունդերը եւ քեզ հետ եղող ազգերը. ամեն տեսակ թեւաւոր գիշատիչ թռչնի եւ դաշտի գազանի կերակուր եմ արել*

քեզ: Դաշտի երեսին պիտի ընկնես, որովհետև ես ասեցի, ասում է Տէր Եհովան:» (Եզեկ 39: 4-5)

Եվ հետո նույն մարգարեն՝ խոսելով Նեբրոլթի թաղման մասին, նշում է.
«Եւ այն օրը կ'լինի որ ես այնտեղ **Գոգին տեղ պիտի տամ իբրև գերեզման Իսրայելի մեջ անցաւորների ձորը՝ ծովի արեւելքումը. Եւ նա արգիլելու է անցաւորներին, եւ այնտեղ պիտի թաղեն Գոգին եւ նորա բոլոր բազմութիւնը, եւ կ'կոչեն Գոգի բազմութեան ձորը:** Եւ Իսրայելի տունը պիտի թաղեն նորանց՝ երկիրը մաքրելու համար եօթը ամիս: Եւ երկրի բոլոր ժողովուրդը պիտի թաղէ, եւ սա նորանց համար համբաւ պիտի դառնայ այն օրը որ ես կ'փառաւորուիմ, ասում է Տէր Եհովան: Եւ մարդիկ պիտի ջոկեն որ միշտ ման գան երկրումը, որոնք ման եկողների հետ թաղեն երկրի երեսի վերայ մնացածներին նորան մաքրելու համար. Եօթն ամսից յետոյ պիտի որոնեն: Եւ ման եկողները ման պիտի գան երկրումը, եւ երբոր մարդի ոսկորներ տեսան՝ նորա կշտին նշան պիտի շինեն մինչև որ թաղողները թաղեն նորան Գոգի բազմութեան ձորումը: Եւ քաղաքի անունն էլ **Համոնա** պիտի լինի. Եւ երկիրը պիտի մաքրեն:» (Եզեկ 39: 11-16)

Նույն հարցի շուրջ Հայկի մասին Ավանդության մեջ ասվում է, որ նա «ճակատամարտի տեղը շենցնում՝ դարձնում է դաստակերտ և անունը դնում է Հայք, հաղթական պատերազմի պատճառով. Սրանից գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր: Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ զորականների հետ՝ Հայկը կոչեց Գերեզմանք, որին այժմ ասում են Գերեզմանակ: Բայց Բելի դիակը, ասում է (Մար Աբաս), դեղերով զմոտելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիներին: Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք:» (Մ.Խորենացի, էջ 86)

Այսպիսով, Հայք երկրի ծագումը կապված է Բելի/Նեբրոլթի և Բաբելոնի ոչնչացման հետ, այսինքն Հայքը խորհրդանշում է Աստծոյ կողմից ստեղծված նոր աշխարհը, որ երևան կգա ժամանակների վերջից հետո նոր երկրի վրա և նոր երկնքի տակ:

Այժմ տեսնենք, թե ում է Հայկը դուրս բերում Բաբելոնից.

Եբերը

Դատելով Մ. Խորենացու հայտնաբերած տոհմաձագերից, Հայկը Բաբելոնից դուրս է բերում Եբերին, որը հրեա ժողովրդի նախահայրն է համարվում: Նրա մասին ես արդեն խոսել եմ տարբեր առիթներով: Եվ հիմա միայն կամփոփեմ արդեն ասածս:

Համանմանորեն այն բանին, որ Նոյի մարգարեության համաձայն, Հաբեթը պիտի բնակվի Սեմի տանը (Ծննդոց 9.27), Եբերի տունը նախատեսված է Հայկի տեղակայման համար, քանի որ ներկայացված տոհմաբանության մեջ, ինչպես տեսանք, Սեմի սերունդներից Հայկին համապատասխանում է Եբերը: Հասկանալու համար թե ով է Եբերը, ըստ Աստվածաշնչի, առաջին հերթին տեսնենք, թե ինչ է մեզ ասում նրա անունը:

Հենց առաջին հայացքից նկատում ենք, որ նրա անունը բաղկացած է երկու արմատից, «եր» և «եր»: Ինչ վերաբերում է «եր» արմատին, ապա դա նույն «հարա/հավա» արմատն է, որ ընկած է Եվայի անվան մեջ և նշանակում է «կյանք»: Իսկ հաջորդ «եր» արմատի հետ միասին, որ Աստծուն է նախանշում, նշանակում է Աստծու կողմից ստեղծված «կենդանի հոգի» (Մն 2: 7), կամ *Աստծո տուն*: Իսկ համատեղելով այն *Հայկի* հետ (*Հայր* հիմքով), որը պետք է բնակեցնի *Երերի* տունը, մենք ստանում ենք *Հայր-հավա* հիմքը, որի կրճատված ձևը *Հայվեն* է: Ինչպես լեզվաբանորեն, այնպես էլ աստվածաբանորեն *Հայվեն* համապատասխանում է *Յահվե-ին* (կամ *Եհովա-ին*), որը ներկայացնում է իրենից *Աստծո և մարդու, տղամարդու և կնոջ* միությունը, կամ խորհրդանշված *Հաբեթով անարատ ամուսնությունը*: (Նույն կապը տեսնում ենք իրոկեզների *Հայավաթա* և սլավոնական *Յառովիտ* անունների մեջ և այլն:) Սա հենց այն «ամուսնությունն» է, որի վրա է հիմնված արարչությունը և որը պղծված է դևի, այսինքն *Բաբի/Բելի* կամ *Բաբելի* միջամտությամբ, քանի որ նա դևի անձնավորումն է: Այնպես որ *Երերի* ելքը *Հայկի* հետ *Բաբելոնից* հավասարազոր է հոգու ելքին իրեն գերության ենթարկած մահաբեր մարմնից: Դա ապացուցում են նաև մի քանի տեղեկություններ որ մեզ հասել են տարբեր աղբյուրներից:

Համարվում է, օրինակ, որ «*Երերի որդիները ապրել են ինչ որ «բաժանման» դարաշրջանում, նման բաբելոնականի»*,³⁵ այսինքն այն նույն «ժամանակաշրջանում», երբ «գործում» էին *Հայկն* ու *Բաբր/Բելը*: Իսկ դա նշանակում է, որ *Երեր* ասելով հասկացվում է մեկը, որ դուրս է գալիս ինչ որ մի տեղից, որտեղ նա գերության մեջ էր:

Այն, որ *Երերն* էր, ում *Հայկը Բաբելոնից* դուրս բերեց, ապացուցում է նաև նրա անվան դերիվացիաի ներկայությունը *խաբարու* բայի մեջ, որը բացատրվում է ինչպես «*արտագաղթել*», «*եկվոր լինել*»:³⁶ Այսինքն, ստացվում է, որ այդպես էր կոչվում նա, ով մարմնական աշխարհում օտար էր, եկվող էր, որի մասին սովորաբար ասում են, որ **նա այս աշխարհից չէ, և այդ պատճառով արտագաղթել է մարմնի աշխարհից դեպի ոգու աշխարհ**: Այնպես որ պատահական չէ, որ Աստվածաշունչը *Երերին* առանձնացնում է *Սեմի* բոլոր որդիներից, երբ նախքան *Սեմի* առաջին տոհմաձառը ներկայացնելը, նա ասում է. «*Եւ Սեմին էլ որդիներ ծնուեցան, որ Երերի որդկանց հայրն (...) էր*» (Մն 10: 21)

Ինչպես *ներսի մարդ*, այսինքն *կենդանի հոգի*, *Երերը* դրսի մարդու ստրուկն է: Այդ դրսի մարդուն Աստվածաշնչում խորհրդանշում են քամյանները, կամ քանանացիները, որոնց ներկայացնում են «*եգիպտացիները*», «*բաբելոնացիները*» և այլն: Տիրոջ ձգտումը (ըստ Ավանդության, *Հայկի*, իսկ ըստ Աստվածաշնչի՝ *Եհովայի/Յահվելի/Հաբեթի, կամ Հիսուս Քրիստոսի*) նրանում է որ *Երերին* դուրս հանի նրա ստրկության երկրից, այսինքն, մարմնի ստրկությունից և ստիպի նրան իշխել իր մարմնի վրա, քանի որ ասված է. «*Եւ ասեց. Անիծեալ լինի Քանանը, ծառաների ծառայ լինի նա իր եղբայրներին*» (Մն 9: 25)

Մենք գիտենք, որ *Հայկը* չուզեց հպատակվել *Բելին/Բաբին* և «*արտագաղթեց*» *Բաբելոնից*: Ինչպես տեսնում ենք, նույնը արեց *Երերը*: Նրանց կապի մասին վկայում է

նան այն փաստը, որ *Եբերի* սերունդը հայերեն լեզվով *հրյա* է կոչվում, այսինքն Հայկն ու Եբերը միասին հնչում են ինչպես *հայր* և *հրյա*, որ սեռի քերականական պատկերի է նման. *Հոր և որդու, Աստծո և մարդու, Աստծո ոգու և ստեղծված հոգու, ամուսնու և կնոջ*: Դա նշանակում է, որ *Եբերը* ներկայացնում է այն հոգուն, որ ստեղծված է *Հայկի (Հայրի, Հոր)* հետ (հոգևոր) «*ամուսնության*» համար:

Քանի վոր մենք մինչև այսօր ապրում ենք *Բաբիլոնյան խառնաշփոթության*, այսինքն լեզուների բազմության մեջ, այս և այն արմատների նշանակությունը կարող ենք գտնել տարբեր լեզուների արմատներում, որ արարչության միակ լեզվից են ծագել: Օրինակ, ես նկատել եմ, որ *Եբերի* ինչպես *Աստծո ոգին կրողի* նշանակությունը պահպանվել է նրա անվան դերիվացիաներում, որ գտնում ենք թյուրքա-արաբական լեզուներում, որտեղ նրանք «*լուր*», «*նորություն*» են նշանակում: Համեմատենք, օրինակ, թուրքմենական *հաբար* (habar) բառը, կամ թուրքական (*xäbär*) և դազադական *խաբարը*, Կարաչայ-բալկարյան *խապարը*, կիրգիզական *կաբարը*, դրիմի թաթարական *հաբերը* (*haber*), թաթարյան *խրբերը*: Դրանց բոլորի նշանակությունը «*լուր բերող*» է: Այսինքն *Եբեր* անվան նշանակությունը «*լուր բերող*» է: Իսկ թե ինչ լուր է դա, կարող ենք հետևություն անել արաբական նույնարմատ «*ավարրի*» բառից, որի նշանակությունը «*բազմաթիվ անգամ մաղաց հացն*» է, որ նույն արաբական «*հուվվարի*» բառից է ծագել, որը նշանակում է «*շատ սպիտակ, ընտրյալ հաց*»: ³⁷

Հացը, ինչպես գիտենք Կտակարաններից, Աստծո խոսքին է վերաբերվում: Իրեն *հաց է* անվանել, ինչպես գիտենք, Հիսուս Քրիստոսը, որ ասաց. «*Ես եմ կենդանի հացն, որ երկնքիցն է իջել*:» (Հով 6: 51)

Նեթաքրքիր է, որ նույն արմատի հետ է կապված նաև մեկ ուրիշ արաբական բառ. «*Հավարրիյուն*», որը նշանակում է «*հատուկ սպեղանի, կազմված 12 նյութերից*», և որը հասկացվում է միևնույն ժամանակ ինչպես առաքյալների թիվը, որոնք տարածեցին Քրիստոսի *ամենաբուժող* խոսքը ամբողջ աշխարհով: Հավանական է, որ այդ նույն *սպեղանին է*, որի մասիս մարգարե Երեմիան գրել է.

«*(...) ես քեզ պիտի սպեղանի դնեմ, եւ քո հարուածներիցը պիտի բժշկեմ քեզ, ասում է Տէրը. Որովհետեւ քեզ՝ Աքսորուած կոչեցին, թէ սա այն Միօնն է, որին խնդրող չ'կայ: Այսպէս է ասում Տէրը. Ահա ես ետ պիտի դարձնեմ Յակոբի վրանների գերութիւնը. Եւ նորա բնակարաններին պիտի ողորմեմ, եւ քաղաքը պիտի շինուի իր փլատակների թումբի վերայ, եւ պալատը իր կարգի համեմատ բնակարան լինի*» (Երեմ 30: 17-18)

Եվ մի ուրիշ տեղ.

«*Ահա ես դնելու եմ նորա վերայ սպեղանիք եւ բժշկութիւն, եւ պիտի բժշկեմ նորանց, եւ պիտի յայտնեմ նորանց խաղաղութեան եւ ճշմարտութեան առատութիւն*.» (Երեմ 33: 6)

Որ այդ «*սպեղանին*» Աստծու Խոսքին է վերաբերվում, մեկ անգամ ևս ապացուցում է Սողոմոնի հետևյալ ասվածքը.

«*Արդարեւ, նրանց ո՛չ դեղերը բժշկեցին եւ ո՛չ էլ սպեղանիները, այլ քո խօսքն է, Տէ՛ր, որ բուժում է ամէն ինչ*.» (Բմաստ 16: 12)

Հավանական է, որ *Եբերի* հետ է կապված նաև հայկական նույնարմատ «*եղբայր*» բառը (ինվերսիայի ենթարկված իր առաջին արմատով) ծագելով *Աստծու արարչությունը միավորող եղբայրական սիրո* հիմքից, ի տարբերություն *Բաբելոնյան թշնամանքի*, որ *մարդկանց բաժանում է* իրար հետ թշնամացած ժողովրդների:

Այս բոլորից կարող ենք եզրակացնել, որ *Եբեր* բառը *ճշմարտության և սիրո ոգով միավորված մարդկանց մի հոգևոր եղբայրություն է* նշանակում, որին տրված է տարածել *Աստծո հացը, կամ լուրը, կամ կյանքի Խոսքը, այսինքն «ավետարանը»*: Այսպիսով, *Եբեր* ասածը վերաբերվում է աստվածաստեղծ հոգուն, իսկ Աստծո Ոգու ներկայությունը իրեն մեջ նրան *արյացի* է դարձնում, այսինքն՝ «*կենդանարար ոգի*» (1 Կոր 15: 45)

Սկզբունքորեն ոչ Եբերը, ոչ էլ Արյացին (Հայկը) չեն կարող վերաբերվել մարմնով սահմանված որևէ երկրային ժողովրդի, քանի որ չկա այդպիսի մի ժողովուրդ, որի բոլոր ներկայացուցիչները արդար լինեն: *Եբերի* և *Հայկի* միությունը, ինչպես արդեն ասել եմ, Աստծո ժողովրդի հիմքն է, որը մարմնով սահմանվող ժողովուրդներից վեր է, ինչպես վկայում է վերոհիշյալ հատվածը պնդելով, որ Աստծո ժողովուրդը «**ազգերի մեջ չպիտի դասուի**»: (Թվ 23: 9-10), որովհետև ոգով է սահմանվում:

Այսպիսով, Հայկը՝ *Եբերին* դուրս բերելով *Բաբելոնից*, մի որոշակի ազգի չե դուրս բերում, այլ իր ոգին կրողներին, ինչ ազգից էլ որ լինե ն, որովհետև ասված է, որ նրան միանում են բոլոր նրանք, ում սրտում Նա տեղ ունի, ով հետևում է Նրան սիրուց ու հավատքից դրժված, այսինքն ոչ միայն *Եբերին*, այլ նաև *Սեմի* այլ որդիներից: Ինչպես Ավանդությունում, այնպես էլ Աստվածաշնչում, այդպիսիները Աստծո ընտանիք են կոչվում, այսինքն դրանք նրանք են, որ բնակվում են Աստծո հետ նույն տան մեջ: Դա այն տունն է, որի մասին Հիսուսը ասած. «*Բմ Հօր տանը շատ բնակարաններ կան*» (Հովի 14: 2) Այդ ընտանիքի ներկայացուցիչները իրենց Աստծո անունով են կոչում. հայերը՝ *Հայկ*, հրեաները՝ *Իսրաել* և այլն:

Այնպես որ *Եբեր* լինելը կամ չլինելը կախված է ոչ թե նրանից, թե ով ինչպես է իրեն կոչում, այլ նրանից, ինչ ոգի է ապրում իրեն մեջ: Եթե դա *Հայկի* ոգին է, այդպիսի մարդը իրավունք ունի կոչել իրեն *Եբերի* անունով, իսկ եթե նրա մեջ *Բաբի/Բելի* (կամ *Բաբելոնի*) ոգին է ապրում, հակառակը, այդպիսինը չի կարող կոչել իրեն *Եբեր* և պետք է կոչվի *քանանեացի*, կամ *Քամյան*, ինչպես *Քամի* բոլոր սերնդները, որոնց ոգին ճանաչվում է, առաջին հերթին, իր ոսկեծուլ հորթին պաշտամունքից, երկրորդ հերթին, մարմնական հաճույքների, նույնիսկ չարաշահումների հանդեպ իր նվիրվածությունից և երրորդ, իր ծայրահեղ մարմնական և հոգեկան էգոցենտրիզմից: Թեև պետք է ասել, որ նրա ազդեցության տակ ընկնում են նաև Աստծո որդիներից ոմանք, որ նույնիսկ սկսում են շփոթել Աստծուն (*Հայկին, Յահվելին/Եհովային*) *Բաբի / Բելի/Բահադի* հետ : Այս փաստը հաստատվում է Տիրոջ կողմից, Որը իր որդիներին հանելով *Բաբելոնից*, ասում է իրենց իր բոլոր մարգարեների և, մասնավորապես, Օսեայի շրթերով.

«Եւ կ'լինի այն օրը, ասում է Տէրը, որ ինձ Ով իմ այր կ'կանչես, **եւ ինձ այլ եւս Բահադս չես կոչիլ: Եւ եւ կ'հեռացնեմ Բահադիսների անունները նորա բերանից**. Եւ նորանք այլ եւս պիտի չ'իշուին իրանց անուններովը:» (Ովս 2: 16-17)

Արդէն գիտենք, որ Աստվածաշնչի *Բահադը* նույն *Բաբել/Բելն/Բաբն* է:

Այսպիսով, վերոհիշյալ խոսքերը վկայում են, որ *Եբերը* շատ անգամ խառնում է *Հայկին Բահադի/Բելի* հետ և ամուսնական կապ է հաստատում վերջինիս հետ փոխանակ այդ կապը հաստատի Նրա հետ, ով Իր խոսքը ժառանգելով իրեն, հանեց նրան Եգիպտոսից ու *Բաբելոնից*:

Ես արդէն ասել եմ այս հողվածի սկզբում, որ Ավանդության ելքը, ինչպես նաև Աստվածաշնչական ելքերը, պատկանում են ինչպես անցյալին, այնպես էլ ներկային և ապագային, քանի որ վերաբերվում են հոգու արտագաղթին մահկանացու մարմնից, այսինքն, նրա ազատագրմանը մարմնի ստրկությունից: Բայց գալիք *Ելքը* վերաբերվում է ժամանակավոր աշխարհի լիակատար ոչնչացմանը և Աստծո հավիտենական աշխարհի դրսևորմանը, այսինքն, ունի էսխատոլոգիական բնույթ: ³⁸

Չե որ, կրկնում եմ, մենք մինչ այսօր ապրում ենք հոգևոր *Բաբելոնում*, որտեղ անընդհատ բախվում են տարբեր մասնավոր աշխարհայացքներ, , որոնք հանգեցնում են պատերազմների, ինչպես ամբողջ մարդկության առումով, այնպես էլ մասնավոր մակարդակի վրա, այսինքն մեկ երկրի մեջ և մեկ ընտանիքի մեջ, քանի որ *Բաբելոնը* խորհրդանշում է սիրո բացակայությունը: Այս *Բաբելոնից*, որում ամբողջ աշխարհն է ապրում, միայն մեկ ելք կա. դա հոգևոր ելքն է: Եվ այդ ելքը դեպի *Երուսաղեմն* է, կամ դեպի *Արարատյան լեռնաշխարհ* (նույնն է, դեպի *Բարայեյան սարերը*): Այդ ելքը բարդ է, բայց առանց դժվարությունների անցնելու ոչ ոք չի կարող մտնել *Աստծո աշխարհ*: Եզրաս մարգարեն այսպես է նկարագրում Աստծո «քաղաք» մտնելու այդ դժվարությունները.

«Քաղաքը կառուցված է և գտնվում է մի հարթավայրի վրա, և լի է բոլոր բարիքներով: Բայց նրա մուտքը նեղ է և այնպիսի ձևով է տեղադրված զառիթափության վրա, որ նրա աջ կողմում կրակ է, իսկ ձախ կողմում՝ խորը ջուր: Նրանց միջև, այսինքն՝ կրակի և ջրի միջև, կա միայն մեկ ճանապարհ, որի վրա մարդու միայն մի ոտնաթաթ է կարող տեղավորվել: Եթե այս քաղաքը տրվի մարդուն որպես ժառանգություն, ինչ՞պես նա կստանա այն, եթե չանցնի իր ճանապարհի վրա ընկած վտանգը: Ես ասացի. «Այդպես, Տէր»: Եվ նա ասաց ինձ. «Այդպիսին է նաև Բարայեյի բաժինը»: Նրանց համար եմ դարը ստեղծել. բայց երբ Ադամը խաղտեց իմ պատգամները, որոշված է լինի այնպես, ինչպես արված է: Եվ այս դարի մուտքերը դարձան խիտ, ցավոտ, հոգնեցուցիչ, նեղ, խորամանկ, լի աղետներով և մեծ ջանքեր պահանջող: Իսկ հաջորդ դարի մուտքերը լայն են, ապահով և անմահության պտուղ են բերում: Այսպիսով, եթե մտնողները, ովքեր ապրում են, չանցնեն այդ նեղ և աղետալի տեղով, չեն կարող ստանալ այն, ինչ պատրաստված է իրենց համար: Ուստի ինչո՞ւ ես շփոթվում, երբ մահկանացու ես: Ինչո՞ւ չընդունեցիր քո սրտում այն, որ ապագայում էր, այլ ընդունեցիր այն, որ ներկա պահին էր» (3 Էզրաս 7: 6-16) ³⁹

Դա *Բաբելոնի* վտանգներն են: Բայց նրա վերջը արդեն մոտ է: *Հայկը/Հիսուս Քրիստոսը* կանգնած է դարպասի մոտ, սպասելով իր երկրորդ գալստի ժամին, երբ Նրա հետ իր վերջին ճակատամարտի կրոնվի *Բել / Նեբրոսիթը*, որին *Բաբելոնը* սպասում է ի դեմս *Նեոի*:

Ժամանակակից Բաբելոնը

Այդ առումով շատ հետաքրքիր տեղեկատվություն է պարունակում Գալինա Ցարյովայի «*Что искали в музее Ирака? Голова Нимрода*» (*Ի՞նչ էին փնտրում Իրակի թանգարանում: Նեվբրոսի գլուխը:*)⁴⁰ փաստագրական ֆիլմը: Այնտեղ խոսքը գնում է *Նեվբրոսի* գլխի մասին, որն Սադամ Խուսեյնը *Բաբելոնի* ժառանգությունը Իրակում ուսումնասիրելուց, իբրև, գտել է խորասուզված մի գաղտնի նյութի մեջ, որը արքելակել է նրա քայքայվելը: Այսօրվա «*Բաբելոնի*» հետաքրքրությունը այդ գլխի նկատմամբ այնքան մեծ է, որ, ըստ գրող և աստվածաբան Թոմ Հոռնի, ինչպես նաև գրող, CERN-ի հետազոտման մասնագետ Էնթոնի Պետչի, հենց այդ գլուխն էր ԱՄՆ-ի Իրակի հետ պատերազմի և Սադամ Հուսեյնի սպանության պատճառը: Այդ պատերազմի նպատակը, ըստ նրանց, եղել է *Նեբրոսի* ԴՆԹ-ն պարունակող այդ գլխի առևանգումը, որը անհրաժեշտ է երկրային էլիտային նշյալ «աշխարհի տիրոջ» հետագա վերակենդանացման համար, որը մտածում է իրականացնել ԴՆԹ-ի հաջորդականացման (սեկվենացման) միջոցով ՄԹԹ սարքավորումների և ՅԴ տպիչի օգնությամբ: Իրենց ասելով, դա հարկավոր է էլիտային Աստծու հետ պատերազմելու համար և նույնիսկ ոչ թե երկրի վրա, այլ «*երկնքում*», - երևի այն պատճառով, որ երկիրն արդեն իրենն է համարում: Այդ նպատակով նա այժմ մի նոր «*Բաբելոնի աշտարակ*» է կառուցում, «*ձգվող մինչև երկինք*», որ այնտեղ, երկնքում, կենդանացված *Նեբրոսի* օգնությամբ մարտ մղի Աստծո դեմ:

Ֆանտաստիկ է հնչում և խելագառ, ճիշտ չ՞է: Այնուամենայնիվ, եթե այդ փաստը կցենք Հովաննես առաքյալի Հայտնության և *Հայկի* մասին Ավանդության հաղորդություններին, ֆանտաստիկան ձեռք կբերի իրական պատկերներ, կապված մեղավոր աշխարհի խելագառության հետ:

Բայց զարմանալին այն չէ, որ էլիտան ցանկանում է Աստծո տեղն զրավել, - դա *Բաբելոնի* (որի ներկայացուցիչն է նա) հայտնի ձգտումն է, - այլ այն, որ չնայաց *Նեոի* հայտնվելու և կործանման կանխորոշվածությանը, նա դեռ հուսով է վերջինի օգնությամբ տապալել Տիեզերքի Արարչին:

Իրոք որ ճիշտ է ասում Սուրբ Գիորքը, որ «*(...) այս աշխարհքի իմաստությունը յիմարություն է Աստուծոյ առաջին. Վասնզի գրուած է՝ թէ իմաստուններին բռնում է իրանց խորագիտութեան մէջ*» (Ա Կոր 3: 19) կամ որ «*Սա է նորանց (այսինքն այս աշխարհի առաջնորդների) ճանապարհը որ յիմար են, եւ նորանց հետեւողները*

հաւանում են նորանց խօսքին» (Մաղ 49: 13), որովհետև այդ ճանապարհը ինքնասպանների ճանապարհ է:

Հայկը որպէս հայ ժողովրդի հոգևոր միջուկի ձևավորիչ

Բայց վերադառնալով *Հայկին*, նշենք, որ *հայերի* համար նա ոչ միայն Աստծո պատկերն է ներկայացրել, այլ նաև եղել է իրենց հոգևոր նախահայրը, որ մինչև այսօր պաշտովում է և ում անունով էլ *հայերը* իրենց *հայ* են կոչում, իսկ օտարերկրացիները՝ *արմեններ*: Իմիջայլոց, վերջինը նույնպէս ծագում է *հայր* բառից (*հայրմեններ*, *այրմեններ*), ինչպէս որ նաև *արյացի* սահմանումը: Այսինքն այդ երեք անվանումները ըստ էության հումանիշներ են, նույնիսկ դրանից ավելին. իրենցից ներկայացնուն են լեզվական դերիվացիաներ, որի հիմքում նույն արմատն է թաքնված: Այլ կերպ ասած, լեզվաբանորեն նույնն են նշանակում: ⁴¹

Այսպիսով, *Հայկը*, որից, ըստ ավանդության, ծագում են հայերը, այն ոգին է, կամ այն գաղափարը, որի շուրջը ձևավորվել է հայ ժողովրդի հոգևոր կորիզը: Այդ գաղափարը ժողովրդի պատկերացումով չարիքին հակառակ սիրո և միասնության գաղափարն է: Ըստ իմաստի դա հնուց եկող մեսիական, այսինքն քրիստոնեական գաղափար է: ⁴² Չնայած *Քամի/Կայենի* որդիների ամբոխների ներխուժումը հայ ժողովրդի մեջ և նրանց լուծվելը այնտեղ, ինչպէս մոլախոտն է լուծվում ցորենի ընձյուղների հետ, այդ գաղափարը անհիշելի ժամանակներից և հազարամյակների ընթացքում ղեկավարել է ժողովրդի մեսիական միջուկի ինքնագիտակցությունը և դա անում է մինչ այսօր: Այդ պատճառով, երբ 2000 տարի առաջ երկրի վրա հայտնվեց Հիսուս Քրիստոսը, հայերը ենթագիտակցական մակարդակի վրա ճանաչեցին իրենց Աստծուն՝ Հայկին և առաջինները աշխարհում ընդունեցին քրիստոնեությունը ինչպէս իրենց ազգային և պետական կրոն: Ի շնորհիվ ժողովրդի հենց այդ հոգևոր կորիզի նա կարողացավ ծանր պատմական պայմաններում փակչած բոլոր կողմերից օտարների հեթանոսական տարրերով, հավատարիմ մնալ իր նախասկզբնական ուղուն: Ասում եմ օտարների հեթանոսական տարրերով, որովհետև, եթե ուշադրությամբ նայենք այսպէս ասած հայկական հեթանոսական աստվածներին, ապա կտեսնենք, որ բոլորը փոխառյալ են պարսկական, ասորական և հունական պանթեոններից:

Այդ փոխառությունները, որ, փաստորեն, կտրել են ժողովրդի կապը իր նախահոր հետ, նրա կյանքում նույն դերն ունեցան, որը Սողոմոնի կյանքում ունեցան Աստծո կողմից արգելված ամուսնություններն քանանացի կանանց հետ, ինչը հանգեցրեց այն բանին, որ իր հոր Դավիթի կողմից միացված հրեա-իսրայելական թագավորությունը, որն մարդու (Հուդայի) և Աստծու (Իսրաէլի) «ամուսնության» խորհրդանիշն էր, բաժանվի: Այնուամենայնիվ, դուրս գալով հարևանների կողմից պարտադրված հեթանոսության մթությունից, հայ ժողովրդի առողջ միջուկը, տրորելով *Բաբելոնի* շարունակական փորձերը ոչնչացնել իրեն այնպէս, որ նույնիսկ հիշողությունը նրա մասին չմնա, կարողացավ՝ վանելով հարևան ժողովրդների ձգտումը իսլամիզացնել նրան, անցնելով նաև ատեիզմի և ուրիշ փորձությունով, գոյատևել և, ի վերջո, թավշյա հեղափոխություն կատարել, որ, ըստ էության, հիմնված է իր սկզբնական քրիստոնեական արժեքների վրա, դրանով իսկ արտաքսելով իր միջավայրից կամ, առնվազն ճնշելով *Կայենի / Քամի*

որդիներին, որ միավելով իր մարմնին, կատաղաբար դիմադրում են այդ միջուկըձեզվաձորոդ գաղափարին: Նրանք, թաքնված լինելով նույն մարմնի տակ, տարբերվում են հայ միջուկից միայն անմաքուր, անխոհեմ ոգով, որը առաջնորդվում է ստերով, զրպարտություններով, դրամասիրությամբ, սպանություններով և այլ եսասիրական սկզբունքներով, որոնք օտար են *Հայկի* ժառանգության բարոյական հիմքին, որը համընկնում է Նոր Կտակարանի Ավետարաններում ներկայացրած ուսմունքի հետ: Միայն այսպիսով, հոգևորապես, են տարբերվում *Կայենի / Քամի* որդիները հայ ժողովրդի վաղեմի միջուկից, քանի որ թեև նույն մարմնից են ծագում, այսինքն ծնվում են նույն ծնողներից, որոնցից ծնվում են նաև Աստծո որդիները, ոգով խորապես *օտար* են վերջիններին: Հետևաբար, պայքարը գնում է, ինչպես հնում, այնպես էլ այսօր, *Տիրոջ/Հայկի*, որը Իր խոսքով ձևավորեց հայ ժողովրդի միջուկը, և *Բաբելոնի* որդիների միջև, որոնք չեն ճանաչում այդ միջուկի բարոյական արժեքները: Դա մի պայքար է լուսի և խավարի, կյանքի և մահվան, ճշմարտության ու կեղծիքի միջև, որում Աստծո, կամ *Հայկի* որդիները կարող են հաղթել միայն խստորեն հետևելով ճշմարտությանը և Արդարությանը, որ իրենց Տեր Աստվածն/Հայկն/ Հիսուս Քրիստոսն է կտակել, և դարձնեն նրանց իրենց էությունը: Դրանով նրանք կբացահայտեն մի ուժ, որին ոչ ոք չի կարողանա դիմակայել և Աստծո օգնությամբ կքշեն չարիքը իրենց միջից, այսինքն, կկործանեն *Բաբելոնի* սովերը, օրհնված *Արարատյան լեռնաշխարհի* վրայից, որից հետո Տերը կվերադարձնի նրան իր վաղուց կորցված երկնային ուրվագիծը, քանի որ Արարիչն ասել է.

«Բրավունքը լար պիտի ընեն, և արդարությունը՝ հարթաչափ. Կարկուտը պիտի քշէ տանի ստրթեան ապաստանարանը, ու ջրերը պիտի ողողեն պատսպարան:» (Ես 28: 17)

1. Նաել *«Шесть дней творения и Седьмой день»* գրքի Նոյն նվիրված գլուխները:
2. <http://www.armenianchurchlibrary.com/files/easternarmenianbible/>
3. Ավելի մանրամասն նայիր իմ *«Шесть дней творения и Седьмой день»* գիրքը, էջ 168
4. Շումերա-ակադական դիցաբանությունը http://dic.academic.ru/dic.nsf/enc_myphology/4493/%D0%A8%D0%A3%D0%9C%D0%95
5. Elisa Castel. Gran diccionario de mitología egipcia - Editorial Aldebaran: <http://www.babylon.com/definicion/baba/Spanish>
6. *Կայենի* ու *Քամի*-ի անունների նշանակությունից է ծագել լատինական «can» - «շուն» բառը, որը բացահայտում է այդ անունների իրական իմաստը:
7. Ավելի մանրամասն նայել իմ *«Шесть дней творения и седьмой день»* գրքում:
8. Шумеро-аккадская мифология http://dic.academic.ru/dic.nsf/enc_myphology/4493/%D0%A8%D0%A3%D0%9C%D0%95%D0%A0%D0%9E
9. Այդ կապակցությամբ նշված պատմությունը հաստատում է, որ Բաբելոնը հիմնված էր ժամանակի հայտնվելու սկզբում («*en el principio del tiempo*») <http://akropolis.es/babilonia-origen/>
10. Նաել «Каков библейский Бог и каково Его творение. Два райских Древа». Буэнос-Айрес 2019 իմ գործը:
11. Մ. Խորենացի: Հայոց պատմություն «Հայաստան» Հրատարակություն 1997, էջ 83 - <http://www.historyofarmenia.am/images/menus/118/Movses%20Khorenaci.pdf>
12. Ցավով չկարողացա գտնել այս գրքի հատերն թարգմանությունը, ոստի ինքս թարգմանեցի ռուսերենից – Синодальный перевод Библии. 3-я книга Ездры 5: 9

13. Себеос. История императора Ираклия. Отд.1,СПБ, 1862 –Չունենալով, ցավոք, հայկական բնօրինակը՝ ստիպված եղա ինքս թարգմանել ռուսերենից այս հատվածը:
14. Նաև իմ գործը. «Таинство Девы Марии Богородицы»
15. Н.С. Шапарова. Краткая энциклопедия славянской мифологии. Баба-яга. Изд. АСТ 2003
16. Вл.Даль «Поверья, суеверия и предрассудки русского народа». Изд. Эксмо, 2008
17. Նաև իմ «Шесть дней творения и седьмой день» գրքի նույնանուն գլուխը:
18. «Иудейские древности» И.Флавия, кн.1-ая, гл.4-ая, пар. 2 - Թարգմանություն ռուսերենից այս հոդվածի հեղինակի կողմից:
19. Мифы народов мира, т.2 М. 1982, стр. 218-219.
20. Книга Юбилеев Введ. и рус. пер. проф. прот. А. Смирнова: 2-й вып. апокрифов Ветхого Завета. — Казань, 1895. Гл.VIII - http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm
21. Մանրամասությունները տես իմ «Шесть дней творения и седьмой день» գրքի «Харран (евр. Haran) и об арамействе Авраама» գլխի այն մասում, որտեղ թարգմանյան, կամ արամեական լեզվի մասին է խոսվում. էջ 311
- 22.Լիլիթ Նազարյան: *Անանիա Շիրակացի*, Եր: 2006, էջ 66-69
23. Книга Еноха. - Ветхозаветные апокрифы, СПб. Амфора, 2001 http://krotov.info/libr_min/from_1/0008.html և Книга тайн Еноха. - Ветхозаветные апокрифы, СПб. Амфора, 2001 http://krotov.info/libr_min/06_e/no/h.htm Վերջին երկուսը գտնում ենք նաև Ենոքի 3-րդ գրքում, հրատարակված իսպաներեն լեզվով. Մաս 9, գլ. 8, - տես <http://www.scribd.com/doc/6541879/Anonimo-El-Tercer-Librode-Enoc>
24. Նաև իմ «Шесть дней творения и Седьмой день» գրքի «Адам. Значение и этимологический калейдоскоп слова» գլուխը:
25. Տես իմ «Шесть дней творения и седьмой день» գիրքը:
26. Աստվածաշունչ - Արարատ թարգմանություն. <http://bible-links.org/>.
27. Պղինձը վերաբերվում է մահկանացու մարմնին: Բայց դա մի առանձին հոդվածի նյութ է:
28. Թարգմանություն հեղինակի
29. Աստվածաշունչ - Արարատ թարգմանություն. <http://bible-links.org/>.
30. Vartan Matiossian. Las leyendas Armenias de Origen I - <http://www.transoxiana.org/0108/matiossian-leyendas.html>
31. Նաև «Каков библейский Бог и каково его творение, Два райских Древа» իմ գիրքը:
32. Աստվածաշունչ - Արարատ թարգմանություն. <http://bible-links.org/>.
33. Ներքովը, մի հանգամ հրաբուխ է, որը գտնվում է Վանա լճի արևմտյան մասում Արարատյան լեռնաշխարհի վրա, Բիթլիսից 75 կմ դեպի հյուսիս:
- 34.Vartan Matiossian. Las leyendas Armenias de Origen I - <http://www.transoxiana.org/0108/matiossian-leyendas.html>
35. Douglas, J.D., Nuevo diccionario Bíblico Certeza, (Barcelona, Buenos Aires, La Paz, Quito: Ediciones Certeza) 2000, c.1982.
36. Տես « О значении слова «еврей» գլուխը իմ «Шесть дней творения и Седьмой День» գրքում. Կ.вт. гл.1; նաև Электронная еврейская энциклопедия. Рубрики: *Авраам, Еврей, Хабару*
37. Տես Հր. Աճարյան. «Հայերեն արմատական բառարան». Երեվան 1971-1979
- 38.Տես իմ «Каков библейский Бог и ткаково Его творения. Два райских Древа», 2019
39. Ցավոք, չկարողացա գտնել այս աղբյուրը հայերեն լեզվով, ուստի հատվածը ռուսերենից եմ թարգմանել:
40. https://www.youtube.com/watch?v=Ak_IRk7xu8Y
- 41 Չնայաց դրան վերջերս աշխուժացել են մարդիկ, որ այս կամ այն պատճառով մի կեղծ ու անտրամաբանական միտք են տարածում հայերի մասին: Հիմնվելով այն փաստի վրա, որ ազգը երկու անուն ունի՝ պնդում են, որ հայերն ու առմենները տարբեր ազգեր են: Այդ անհեթեթությունը ծագում է ակնհայտ լինգվիստական տգետությունից: Եվ ոչ միայն, որովհետև նույն երևույթը ոչ միայն հայերին է բնորոշ, այլ նաև շատ ուրիշ ազգերին: Երկակի անունները կապված են այն բանի հետ, թե ինչպես են իրենք ժողովրդները իրենց անվանում և ինչպես են իրենց անվանում հարակից ժողովուրդները: Օրինակ, երկակի, եթե ոչ եռակի, անուն ունեն վրացիները, որոնք իրենց երկիրը կոչում են Քարթլիա, Հայկի կրտսեր եղբոր՝ Քարթլոսի անունով, մինչ դեռ մյուս ազգերը տարբեր ձևով են նրանց անվանում. Օրինակ, մենք, հայերս, նրանց *վրացի* ենք կոչում, իսկ իրենց երկիրը՝ *Վրաստան*: Ռուսները նրանց երկիրը *Грузия* են անվանում, իսկ եվրոպացիները՝ *Ջորջիա*: Կամ մի ուրիշ օրինակ. Գերմանացիները իրենց երկիրը *Голландия* են անվանում, իսկ այլ ազգերը՝ Ալեմանիա կամ Գերմանիա: Ալբանացիները հայտնի են նաև՝ *Շվիպերիա* անունով, Հունգարները՝

Մաջարիա և այլն: Ավելի շատ օրինակներ փնտրողները կարող են նայել իմ «*Заразочный Арарат*» գիրքը: Այսինքն երկու կամ ավել անուն ունենալը չի նշանակում, որ այդ անունները տարբեր ազգերի են պատկանում: Շատ հաճախ ժողովրդները օտարերկրացիներին կոչում են նաև այն անվամբ, որ ավելի հաճախ է հանդիպում տվյալ ժողովրդի մեջ: Օրինակ, Արմեն անունը ամենատարածված անունն է հայերի մեջ: Նույն պատճառով, Մեծ Հայրենական պատերազմի տարիներին գերմանացիներին *Ֆրիզներ* էին անվանում, իսկ ռուսներին՝ *իվաններ*:

42. Նայիր իմ հոդվածը «Об истоках христианства», որտեղ ես գրել եմ կյանքի հիմքը կազմող քրիստոնեական գաղափարի նախաստեղծության մասին:

Աստվածաշնչի օգտագործված թարգմանությունները.

1. Աստվածաշունչ - Արարատ թարգմանություն - <http://bible-links.org/>

2. Հայ Առաքելական Եկեղեցու Գրադարան

<http://www.armenianchurchlibrary.com/files/easternarmenianbible/>